AZG NEW 1.QXD 8/21/2009 10:30 PM Page 1

Azg Ազգ

22 ՕԳՈՍՏՈՍ 2009 ՇԱԲԱԹ 149 (4291)

ISSN: 1829-1651

ԱՄՆ-ի իշխանությունները հավանություն են տվել «Սան մայfրոսիստեմս» հսկայի հետ «Օրակլի» միաձուլման պլաններին

Միացյալ Նահանգների համակարգչային ծրագրային ապահովման արտադրող «Օրակլ» կորպորացիան ԱՄՆ-ի հակամենաշնորհային իշխանություններից «կանաչ լույս» է ստացել «Սան մայfրոսիստեմս» համակարգչային հսկայի հետ միաձուլման համար: «Օրակլ»-ի ներկայացուցիչները այս մասին հաղորդել են հինգշաբթի օրը:

Նրանց խոսքով, այժմ ոչ մի կարգի արգելքներ չկան, որպեսզի գործարքի ձեւակերպումը, որը գնահատվում է 7,4 միլիարդ դոլար, ավարտվի մինչեւ ընթացիկ ամսվա վերջը: Միաձուլման շնորհիվ նոր ընկերությունը կարող է դառնալ գլոբալ համակարգչային շուկայի առաջատարի՝ Այ Բի Էմ կորպորացիայի իրական մրցակիցը: Ինչպես տպավորվում է, «Սան»-ի բաժնետերերը հավանություն կտան գործարքի կնքմանը:

Հայոց ցեղասպանության զոհի ժառանգի հայցը Կալիֆոռնիայում հակասահմանադրական է ճանաչվել

ԱՄՆ դաշնային դատարանը հակասահմանադրական է ճանաչել Կալիֆոռնիայի նահանգում ընդունված օրենքը, որով հնարավորություն էր տրվում Հայոց ցեղասպանության զոհերի ժառանգներին ապահովագրական ընկերություններից իրենց պանված հարազատների ապահովագրական գումարները պահանջելու: Այդ մասին երեկ հայտնեց «Ազատություն» ռադիոկայանը, վկայակոչելով «Լոս Անջելես թայմս» թերթի երեկվա համարը: 2000 թվականին ընդունված օրենքը Կալիֆոռնիայի դաշնային դատարանում ճնշության է առնվել ցեղասպանության զոհերից մեկի ժառանգի՝ ապահովագրական ընկերություններից մեկի վճարումից հրաժարումը վիճարկելու հայցով: Դատավորն ասել է, որ Նահանգների դաշնային կառավարությունը գիտակցված որոշում է կայացրել չօգտագործել խաղաղական հետեւանքներով հղի «ցեղասպանություն» տերմինը Առաջին աշխարհամարտի տարիներին զոհված հայերի նկատմամբ: Կալիֆոռնիայի դատարանն իր մերժման հիմնավորումներում նշել է, որ խնդրի վերաբերյալ ազգային խաղաղականությունը որոշվել է նախագահներ Քլինթոնի եւ Բուշի օրոք, ովքեր ընդդիմացել են Հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ Կոնգրեսում բանաձեւի ընդունման փորձերին:

Այս ցավալի փաստը բարոյական եւ ֆինանսական հարված է ոչ միայն այն բազմաթիվ հայորդիներին, որոնք հույս ունեն դրամական եւ բարոյական փոխհատուցումներ ստանալու որպես ցեղասպանության ենթարկված հարազատի ժառանգ, այլեւ Հայ դատին ընդհանրապես, եւ դեռ կարող է շատ ջուր վերցնել:

«Կապատեթ եւ ընկերություն» փաստաբանական գրասենյակը, որ հետապնդում էր այս եւ նմանատիպ մի քանի հայցեր, որոշել է դատարանի որոշումը հղել վերաքննիչին:

ՏԱՐԵԴԱՐՁ

Շնորհավորանքներ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ կաթողիկոսին

Երեկ Ամենայն հայոց հայրապետ Գարեգին Բ-ի ծննդյան 58-րդ տարեդարձի առթիվ Նորին Սրբությանը շնորհավորեց եւ իր բարեմաղթանքները հղեց Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը:

Ըստ Ազգային ժողովի հասարակայնության հետ կապերի վարչության հաղորդագրության՝ երեկ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանն այցելեց Մայր աթոռ Սբ. Էջմիածին եւ նույնպես շնորհավորեց ու ԱԺ պատվո մեդալ հանձնեց Վեհափառ հայրապետին՝ Հայաստանյայց առաքելական եկեղեցու, հայ ժողովրդի հոգեւոր կյանքում բացառիկ առաքելության, նրա ազգային մշակույթի զարգացման եւ ազգային ինքնության պահպանման գործում ունեցած ներդրումների եւ ակնառու նվաճումների համար:

Նորին Սրբությանը Սբ. Էջմիածնում երեկ շնորհավորեցին վարչապետ Տիգրան Սարգսյանը, կառավարության անդամներ, թեմական առաջնորդները, Մայր աթոռի միաբանները, մշակույթի գործիչներ:

«Ազգ»-ը միանում է շնորհավորանքներին:

Զուսպ են Հայաստանում նախագահ Սարգսյանին հասցեագրված մեղադրանքների թուրքական արձագանքները

Հավանաբար Անկարան հույսեր է փայփայում, որ նա կվերանայի Թուրքիա չմեկնելու որոշումը

ՀԱԿՈԲ ՉԱՔԲՅԱՆ

Հուլիսի 28-ին Սերբիայի նախագահի հետ հանդիպումից հետո ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը հայտարարել էր, որ ինքը թեեւ ֆուտբոլային պատասխան հանդիպման համար հրավեր ստացել է Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլից, սակայն պատասխան այցի համար անհրաժեշտ է համապատասխան միջավայր ապահովել, ավելացնելով. «Ես կընդունեմ հրավերը միայն ձեռքբերված պարտավորվածությունների կատարման դեպքում, այսինքն՝ Թուրքիա կմեկնեմ, եթե ունենանք բաց սահման կամ գտնվենք Հայաստանի ապաշրջափակման շեմին»:

Հաջորդ օրն արձագանքելով նախագահ Սարգսյանի հայտարարությանը՝ թուրքական մամուլը դա որակեց Թուրքիային վերջնագիր ներկայացնելու դրսեւորում, իսկ արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուն ընդգծեց, որ Հայաստանի նախագահը սահմանի բացումը դիտարկում է ֆուտբոլային պատասխան խաղի համար Թուրքիա ժամանելու նախապայման:

Թուրքիայում ՀՀ նախագահի հայտարարությունը այլ արձագանքներ գրեթե չունեցավ: Եղածներն էլ չափազանց զուսպ էին: Ըստ երեւույթին թուրքական իշխանությունները դեռեւս հույսեր են փայփայում, որ նախագահ Սարգսյանը կվերանայի Թուրքիա չմեկնելու որոշումը: Այդ իսկ պատճառով էլ երկրում ավելորդ շահարկումների տեղիք չտալու, ինչպես նաեւ անախորժ աղմուկից խուսափելու համար աշխատում են նոր արձագանքների առիթ չտալ:

Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա Սերժ Սարգսյանի հայտարարությունը մեր երկրում ե՛ւ շահարկումների տեղիք է տվել, ե՛ւ պատճառ է հանդիսացել, որ աննախադեպ աշխուժանան ինչպես հայտարարության, այնպես էլ հայ-թուրքական հարաբերությունների հարցի վերարծարծումները: Տրամաբանական է, որ ՀՀ նախագահի հուլիսի 28-ի հայտարարությանն արձագանքող թուրքական մամուլը պետք է անդրադառնար դրա հայաստանյան արձագանքներին, շեշտը դնելով հատկապես շահարկումների վրա:

Թուրքական մամուլի ուշադրությունից չէր վրիպել նաեւ օգոստոսի 19-ին «Ուրբաթ» ակումբում տողերիս հեղինակի մամուլի ասուլիսը, որը «Զումհուրիեթ» թերթն ու Նյու Յորքի Turkishny.com կայքէջն օգոստոսի 20-ին ներկայացրել են «Պատասխան հանդիպման համար Սարգսյանը պետք է մեկնի Թուրքիա» վերնագրերով:

Տես էջ 8

ԱՊՀ ԱԳ նախարարները կքննարկեն սահմանների վերահսկողության հարցը

ԱՊՀ երկրների արտաքին գործերի նախարարների խորհրդի հերթական հանդիպումը տեղի կունենա հոկտեմբերի 8-ին Քիշնեւում: «Ինտերֆաքս» տեղեկացմամբ, ԱՊՀ գործադիր կոմիտեի մամուլի ծառայությունը հաղորդել է, որ հանդիպմանը ծրագրվում է մի շարք կարեւոր հարցերի քննարկում պատշաճության, սահմանային վերահսկողության, արտակարգ իրավիճակներում ու բնական աղետների հետեւանքների վերացման ժամանակ համագործակցության առնչությամբ:

Նախարարները քննարկելու են նաեւ չափումների միավորների միասնականության, ստանդարտացման ու չափագրման ոլորտներում համաձայնեցված քաղաքականության իրականացմանն առնչվող հարցեր:

Հաղորդագրության մեջ նշվում է նաեւ, որ նախարարները անդրադառնալու են սահմանային վերահսկողության հարցերին ու համագործակցությանը այնպիսի անցակետերի առումով, որոնք գտնվում են ԱՊՀ անդամ երկրների ու համագործակցության անդամ չհանդիսացող պետությունների միջեւ:

Նման հարցի ներառումը նախարարների օրակարգում ակնհայտորեն առնչվում է օգոստոսի 18-ին ԱՊՀ կազմից Վրաստանի դուրս գալու հանգամանքին: Սահմանների վերահսկողության հարցը հատկապես վերաբերում է նաեւ Հայաստանին՝ Վրաստանի հետ ոչ միայն սահմանակից լինելու, այլեւ այդ երկրի տարածքով ԱՊՀ անդամ մյուս երկրների հետ ցամաքային հաղորդակցության հարցերի առումով:

Ա. Հ.

Ստեղծվեց Արմենական-ՌԱԿ «Եղեգնաձոր» ակումբը

Երեկ Վայոց ձորի մարզային կենտրոնում՝ Եղեգնաձորում, տեղի ունեցավ Արմենական-ՌԱԿ «Եղեգնաձոր» ակումբի բացումը: Ակումբի բացման արարողությանը ներկա էին Արմենական-Ռամկավար ազատական կուսակցության Հանրապետական վարչության ատենապետ Արմեն Մանվելյանը, վարչության անդամներ Գայանե Մուրադյանը եւ Սուրեն Սարգսյանը: Ակումբի ստեղծման նախաձեռնող խումբը ողջունեց Արմենական-ՌԱԿ-ի ստեղծումը՝ նշելով, որ վաղուց էր հասունացել պահը Հայաստանում ունենալու ավանդական կուսակցության հենքի վրա գործող իրական հանրապետական ժողովրդավարական կուսակցություն: Արմենական-ՌԱԿ վարչության անդամները ներկայացրին կուսակցության ստեղծման անհրաժեշտությունը եւ նրա դիրքորոշումները ներքաղաքական եւ արտաքին քաղաքական հարցերում: Կուսակցության նորագիր անդամները որոշում ընդունեցին ստեղծել «Եղեգնաձոր» ակումբը, կազմվեց 3 հոգուց բաղկացած վարչություն հետեւյալ կազմով՝ Արտաշ Այվազյան (ատենապետ), Արմեն Ադամյան, Յուրի Կարապետյան:

Կրկին երկրաշարժ Գառնիում

Երեկ առավոտյան՝ 9:34 րոպեին, Գառնի գյուղից 17 կմ հյուսիս-արեւելք տեղանքում տեղի է ունեցել երկրաշարժ, որի ուժգնությունը էպիկենտրոնում կազմել է 3-4 բալ: Այդ մասին հայտնում է Հայաստանի սեյսմիկ ծառայությունը:

Սայլը ձիուց առաջ

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ



Կա՞ մի ուրիշ պետություն, որտեղ ամեն օր թերթերի ու լրատվության թեմաների 90 տոկոսը քաղաքականությանը վերաբերի: Կա՞ մի ուրիշ պետություն, որտեղ ազգը ճնի ու արքնանա մտասեւեռումներով՝ ի՞նչ ասացին, կերան, խմեցին, իրար ի՞նչ թքու ու քաղցր խոսք ասացին երկու-երեք տասնյակ մի քանի պատգամավոր ու իշխանավոր: Ու վերջ՝ միայն դա լինի կյանքը, դրա շուրջը պտտվի ողջ խոսքն ու զրույցը: Երեւի այդպիսի մեն-միակ մի պետություն կա աշխարհում, եւ դա Հայաստանն է... դատելով հատկապես մամուլի ամենօրյա հրապարակումներից: Ու մենք էլ, ակամա, ընկնում ենք կարծրատիպերի այդ հարահոսի մեջ, բոլորս միասին մամուլում ստեղծում մի «կյանք», որ, այնուամենայնիվ, եթե լավ մտածենք, մեր ժողովրդի միայն 1 տոկոսին է վերաբերում եւ հետաքրքրում: 3 մլն-ի 2 մլն 970 հազարը առօրյա այնպիսի հոգսի մեջ է խրված, որ նրան առավել հուզում է, թե ո՞նց շուռումուռ տա իր օրվա բյուջեն, որ բացի սմբուկ-վարունգ-լոլիկից՝ նաեւ մի լուրջ բան ունենա իր սեղանին, ու երեխեքը կուշտ լինեն, որ կարկուտն ու անձրեւը չփչացնի իր այգին, որով հույս ուներ ձմեռը կերակրվել, որ սեպտեմբերը քիչ՝ երեխեքի դասագրքի ու հագուստի փող գտնի:

Տես էջ 2

AZG NEW 2.QXD 8/21/2009 10:03 PM Page 1

1-2 օրից աղմկահարույց սպանությունները կբացահայտվեն

Երեկ լրագրողների հետ հանդիպման ժամանակ ՀՀ ոստիկանության պետ, ոստիկանության գեներալ-մայոր **Ալիկ Սարգսյանը** ամփոփեց անցած 6 ամիսների հանցավորության վիճակը եւ դրա դեմ ոստիկանության ստորաբաժանումների տարած պայքարի աշխատանքները: Ոստիկանապետը նշեց, որ համակարգի բոլոր ուղղություններով աշխատող ստորաբաժանումներում վեց ամսվա կտրվածքով արձանագրվել են շոշափելի արդյունքներ՝ 10 տոկոսով աճ հանցագործությունները հաշվառումից թաքցնելու արատավոր գործելաոճը բացառելու պարագայում: Հանրապետությունում գրանցվել է 6849 դեպք (2008-ին եղել է 3998), որը 71,3 տոկոսով կամ 2851 դեպքով աճել է: , Ոստիկանապետը նշեց, որ հանցագործությունների թվաքանակի շեշտակի աճը պայմանավորված է նաեւ տուժողի բողոքի բացակայությամբ, ՀՀ քր. դատավարության օրենսգրքի 183 հոդվածով կարճված գործերի կամ մերժված նյութերի հաշվառման հանգամանքով (1324 դեպք) եւ նաեւ 2091 դեպք, որ կատարվել է նախկինում, սակայն հայտնաբերվել ու հաշվառվել է 1-ին կիսամյակում: Հանցավորության մակարդակը բարձր է Երեւանում՝ 316 դեպք, Լոռիում՝ 299, Արարատում՝ 137, Գեղարքունիքում՝ 136, Արագածոտնում՝ 134, Շիրակում՝ 133: Անդրադառնալով թմրամիջոցների հետ կապված հանցագործություններին՝ պրն Սարգսյանը նշեց, որ հայտնաբերվել է 539 դեպք նախորդ տարվա 383-ի դիմաց, իսկ թմրամիջոցների պաշարների շրջանառության, իրացման դեպքերի բացահայտումը աճել է 2,4 տոկոսով:

«Ազգի» այն հարցին, թե թրաֆիկինգի դեմ ուժեղացվո՞ւմ է պայքարը, պրն Սարգսյանը նշեց. «Ոստիկանության աչալուրջ ու խիստ տարվող աշխատանքի արդյունքում Հայաստանը ԱՄՆ պետդեպարտամենտի զեկույցի ցուցակում տեղափոխվել է 2-րդ խումբ: Իսկ ՀՀ ոստիկանությանը ԱՄՆ-ի կառավարությունը նվիրաբերել է համակագիչներ, տեխնիկա»:

Տնտեսական հանցագործությունների բացահայտման թիվը գրեթե

կրկնակի է եղել նախորդ տարվա համեմատ:

ՀՀ ոստիկանության աշխատանքը ՀՀ նախագահը գնահատել է բավարար, նշեց ոստիկանապետը ու պնդեց. «Քանի որ հանրապետությունում կա գոնե մեկ չբացահայտված հանցագործության դեպք, ոստիկանության աշխատանքը լավ կամ գերազանց համարել չի կարելի»:

Լրագրողներին հուզող աղմկահարույց սպանություններին պատասխանելով, պրն Սարգսյանը խոստացավ՝ 1-2 օրից երեք սպանության դեպքերի ավարտի մասին կտեղեկացվի: Այս պահին դեռ կա 12 սպանության գործ, որոնք բացահայտման վերջին փուլում են գտնվում:

Փոխոստիկանապետ Միհրյանի սպանության հետ կապված կրկին նշեց, որ մոտ օրերս նախաքննությունը կավարտվի եւ կան ձերբակալվածներ: «Օրենքով գողերին» անդրադառնալով՝ ոստիկանապետը նշեց, որ մեկ տարվա ընթացքում պատասխանատվության են ենթարկվել 8-ը, իսկ 34-ը՝ «դրանք մեր կլիենտներն են ու եղանակ չեն ստեղծում, մշտապես գտնվում են մեր ուշադրության կենտրոնում եւ վաղ թե ուշ «մեռած» վիճակում անգամ մեր դուռն են գալու...»:

Ոստիկանապետը, պատասխանելով **«Ազգի»** հարցին, ասաց, որ մոտ 60 ոստիկանի նկատմամբ ծառայողական քննություն է տարվել, 4-5-ի վերաբերյալ գործերը ուղարկվել են հատուկ քննչական ծառայության քր. գործ հարուցելու համար: Հայտնաբերվել է կաշառակերության 31 դեպք, որից մեկը՝ ոստիկան է եղել ու ձերբակալվել է 100.000 դրամ կաշառք վերցնելու համար:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

Նվեր Մնացականյանին ծեծողները հայտնաբերվել են

ՀՀ ոստիկանապետ Ալիկ Սարգսյանը տեղեկացրեց, որ «Շանթ» հեռուստաընկերության մեկնաբան Նվեր Մնացականյանին ծեծի ենթարկող երկու երիտասարդները հայտնաբերվել են եւ ըստ հարուցված քր. գործի (117-րդ հոդված)՝ ժամանակավոր բաց են թողնվել մինչեւ դատական նիստի օրը: Պարզվել է, որ համալսարանի ուսանող տղան Նվերին շփոթել է իր սիրած աղջկա հոր հետ: Երիտասարդները մանրամասն պատմել են եւ խոստովանել, որ իրենք են ծեծել: Ոստիկանապետը նշեց նաեւ, որ այդ դեպքի հետ որեւէ առնչություն չունեն Հրանտ Վարդանյանն ու նրա որդին, եւ չկա որեւէ ապացույց, որեւէ կապ Վարդանյանների եւ Մնացականյանի միջեւ: Մ.Մ.

«Խուլ-համրեր» միավորումից հեռացրել են Ժորա եւ Տիգրան Վարագյան եղբայրներին

Երեկ Երեւանի Կենտրոն-Մարաշ դատարանում քննվում էր քաղաքացիական գործ՝ Ժորա Վարագյանի հայցն ընդդեմ «Խուլերի միավորում» ՀԿ-ի ներկայիս ղեկավարության: Ժորա Վարագյանը 26 տարի աշխատել է «Խուլ-համրեր» ՀԿ-ում որպես նախագահ: Սրանից երկու տարի առաջ, ըստ Ժ. Վարագյանի, կազմակերպված ձեւով տեղի է ունեցել համագումար, որտեղ վերջինիս պարտադրել են հրաժարական տալ:

«Երկու տարի է անցել, չեն բավարարվել դրանով եւ հիշել են, որ ինձ եւ եղբորս պետք է միավորման շարքերից հեռացնեն: Ես էլ դրա դեմ պայքարում եմ. իբր թե մենք մարդ ենք բերում, կռիվներ ենք սարքում, խանգարում ենք աշխատանքներին: Ուղղակի աբսուրդ է: 26 տարի խուլերի միավորումում ամեն ինչ ստեղծել եմ, բնակարաններով շատերին ապահովել, ու այդ երկու եղբայրները (խոսքը «Խուլ-համրեր» ՀԿ-ի ներկայիս ղեկավարներ Անդրանիկ եւ Գրիշա Գրիգորյանների մասին է), որոնք Հայաստանում չեն ապրել, ուզում են մշակույթի եւ սպորտի պալատը սեփականացնել: Տեսնում են, որ մենք հասկանում ենք իրենց ձեռնարկելիք քայլերը, մեզ ուզում են մեկուսացնել», «**Ազգ**»-ին պատմեց Ժորա Վարագյանը:

«Պայքարում եմ, որպեսզի վերականգնեմ իմ պատիվը, արժանապատվությունը: Ես խորհրդային ժամանակներում 12 տարի եղել եմ ատենակալ, իմ դասատուները եղել են դասավորներ, եղել եմ կոմսոմոլի քարտուղար: Երեխաների համար ամեն տարի ստեղծել եմ պիոներական ճամբարներ: Եղել եմ Սովետական Միության խուլերի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ, Հայաստանի առաջին չեմպիոններին եմ պատրաստել: 42 բնակարան եմ բաժանել խուլ- համրերին», ասում է Ժորա Վարագյանը:

Պատասխանող կողմը դատարան էր ուղարկել Փաստաբանների պալատի անդամ Լ. Գրիգորյանին:

Վերջինս Վարագյանի հայցին առարկեց հետեւյալ հիմնավորումներով. «Ժորա Վարագյանի հեռացման հարցը բազմաթիվ անգամ բարձրացրել են ՀԿ անդամները, որի պատճառը եղել է հայցվորի կողմից կազմակերպության գույքն օտարելը, կազմակերպությանը ծանր վիճակի հասցնելը եւ այլ գործողություններ , որոնք հանգեցրել են ՀԿ ընդհանուր ժողովի կողմից նրա լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելուն եւ զբաղեցրած պաշտոնից հեռացնելուն», դատարանում ասաց պատասխանող կողմի փաստաբանը եւ ավելացրեց, որ Ժորա Վարագյանի կողմից «Խուլերի եւ համրերի» կազմակերպության նպատակների եւ խնդիրների դեմ ուղղված արարքներ թույլ տալու, անվայել պահվածքի, կազմակերպության գրասենյակում կռիվ սարքելու, աշխատանքները խաթարելու հետ կապված հարցերը քննարկվել են եւ 2009-ին հրավիրված նախագահության նիստին կայացվել է հայցվորին կազմակերպությունից վտարելու որոշումը:

Հայցվորի այն հարցին, թե ո՞րն է իր անվայել պահվածքը, եւ կարո՞ղ է կոնկրետ փաստեր բերել փաստաբանը, վերջինս նշեց, որ դա ապացուցվում է արձանագրությամբ:

Վարագյանը դատարանին ներկայացրեց եւս մի փաստաթուղթ-շնորհակալագիր, որով շնորհակալական խոսք է հայտնվել Վարագյանին ժողովի անձնակազմից՝ նրա գործունեության համար:

Փաստաբանը նկատեց. «Փաստաթղթի սկզբնական մասից երեւում է, որ ֆինանսական շատ վատ վիճակում է գտնվել կազմակերպությունը եւ այդ ֆինանսական վատ վիճակը եղել է հայցվորի պաշտոնավարության ժամանակ, նրա ուղղակի գործողությունների հետեւանք են եղել, եւ խուլերը պահանջել են որոշակի չափով այդ իրավիճակը շտկել, եւ Վարագյանը՝ ինքն իր կամքով կատարել է բարեգործություն եւ այս շնորհակալությունը վերաբերում է նրա կատարած այդ բարեգործությանը, ոչ թե նրա կատարած ամբողջ աշխատանքին: Այս շնորհակալական նամակից հետո էլ Վարագյանը շարունակել է իր գործողությունները կազմակերպության դեմ, եւ դրա համար խուլերը ստորագրահավաք են կազմակերպել՝ Ժորա Վարագյանի հետ կապված այդ գործողությունների դեմ »:

Ի դեպ, «Խուլ-համրեր» միավորումից հեռացրել են նաեւ Ժորա Վարագյանի եղբորը՝ Տիգրան Վարագյանին: Վերջինս հայտարարեց, որ բոլոր ստորագրահավաքները խուլ-համրերից ճնշման ներքո են վերցրել, օգտվելով վերջիններիս անիրազեկությունից:

Ինչեւէ, դատարանն անցավ գործի քննությանը, նյութերի հետազոտման, վճիռը կհրապարակվի սեպտեմբերի 3-ին:

Ն. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՄԱՌՈՏ

Վնասներ կարկտից

Օգոստոսի 20-ին Գեղարքունիքի մարզից հայտնել են, որ ժամը 18.00-ի սահմաններում մարզի Ձիլ գյուղում արձանագրված կարճատեւ ուժեղ կարկտից զգալիորեն վնասվել են համայնքի պտղատու այգիները՝ 18 հա, եւ ցանքատարածքները՝ 200 հա մակերեսով:

Վայոց ձորի մարզից ստացված տեղեկության համաձայն՝ ժամը 21.20-ի սահմաններում մարզի Հեր-հեր համայնքում 10-15 րոպե տեղացած ուժեղ կարկտից վնասվել են գյուղի պտղատու այգիներն ու ցանքատարածքները:

Վնասվել են նաեւ Կարմրաշեն համայնքի բանջարաբոստանային կուլտուրաները եւ ցորենի ցանքատարածքները:

Պատճառված վնասի չափը ճշտվում է:

Մ. Մ.

Նշանակվեցին նոր փոխնախարարներ

Երեկ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի որոշմամբ Ռուբեն Սինոյանը նշանակվել է Հայաստանի Հանրապետության տրանսպորտի եւ կապի նախարարի տեղակալ:

Վարչապետի մեկ այլ որոշմամբ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի տեղակալ է նշանակվել Վարդան Կարապետյանը:

Սայլը ձիուց առաջ

1-ին էջից

Ու բոլորովին-բոլորովին նրա պետքը չէ, թե «2002-ից Ռոբերտ Քոչարյանը ձգտում էր հակակշռել Սերժ Սարգսյան-Անդրանիկ Մարգարյան ձեւավորվող տանդեմին՝ խաղի մեջ մտցնելով նոր ֆիգուրներ...», առաջին նախագահի մեծությունը հասկացած ՍԴՀԿ ատենապետի հուզումը, որ մեր քաղաքական գործիչները սպասում են հոկտեմբերի 14-ին ու ներքաղաքական սրացումներին եւ այլն: Ամեն օր մեր թերթերում հեղափոխություն է (եւ ինձ էլ դուրս չեմ դնում ասածիս հասցեատերերից՝ ինքնաքննադատություն ընդունեք), ու ոչ մեկիս չի հուզում, ասենք, երեկ Ձիլ գյուղում տեղի ունեցած կարկտահարությունը, որից առանց այդ էլ աղքատ այդ գյուղում մարդիկ զրկվեցին բերքից ու ձմեռը սոված են մնալու: Ամեն օր մեր թերթերի շիկացած արհեստական քաղաքական կյանքը նոր ու ավելի արհեստական-անձոռնի ձեւեր է ծնում, որոնց գործողությունների սուբյեկտն ու պատասխանատուն դառնում է իրականում ոչ մեկին չհետաքրքրող ժողովուրդը: Իրականում մեր քաղաքական կյանքի արհամարհանքները մամուլում պետք է լինեին այնքան, ինչքան իրականում կան եւ որքանին արժանի են՝ տասից մեկ չափաբաժինը, մնացած ինը պետք է պատմեր մեր ժողովրդի տարբեր շերտերի ու նրանց դժվարին կյանքի մասին: Թե չէ ի՞նչ է դուրս գալիս՝ 2 մլն 270 հազարը մի կողմում են, էն մի քանի տասնյակ «էլիտան»՝ իրեն սպասարկող 30 հազարով՝ մի, ու մեր լրագրողական աշխարհը սպասարկում է էդ մի քանի տասնյակին, պատմում նրանց կյանքի բոլոր մանրամասների մասին: Ու ստացվում է, որ էս 3 միլիոնանոց երկիրն ուրիշ գործով չի զբաղվում, բացի քաղաքականությունից, ուրիշ ոչնչի մասին այս երկրում չեն խոսում, բացի քաղաքական թեմաներից: Բայց էլ ուրիշ ի՞նչ եզրակացության պետք է գա ընթերցողը՝ մի քանի տասնյակ ընթերցվող թերթերն ամեն օր բացելով. Գալուստ Սահակյանն այս ասաց, Շարմազանովն՝ այն, Ծառուկյանը Մոնակոյում է, Քոչարյանն էլ՝ նրա հետ... իրական եւ անիրական, հորինված եւ մտնածուծ, ընթերցողին խուստուտ տվող, բզող ու ծաղկող լուրեր:

Է, եթե միայն այդ պատմես՝ պարզ է, քաղաքականությունը եւս իր սցենարներն ունի, եթե ինքը չի զարգանում՝ նրան լրագրողներն ու թերթերը կզարգացնեն... որ կյանքը հետաքրքրական դառնա, էլ ինչ քաղաքականություն՝ առանց կուլմինացիաների, հեղափոխությունների եւ թեժ ամառների ու աշունների: Ու այդպես՝ Հայաստանի քաղաքական կյանքը ոչ այնքան իրականություն է ու մեր ժողովրդի գերակշռող մասին հետաքրքրող ինչ-որ նյութ, այլ լրագրողներիս հորինածը, մեծ մասամբ՝ չեղած ու անգո մի բան, որին մենք ենք շունչ ու մարմին տալիս, քաղաքական շրջանակներն էլ հեւիհեւ փորձում են հասնել իրենց ծնած, բայց սայլը ձիուց առաջ ընկած լրատվության հետեւից:

Իսկ միջին վիճակագրական հայն ու նրա դժվարին կյանքը մեր թերթերի եւ լրատվական քողարկումներից հազվագյուտ միայն ծիկրակում են:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԸ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
/ հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

AZG NEW 3.QXD 8/21/2009 9:07 PM Page 1

«Ամրագոտիները խնդիրների մեկ հարյուրերորդական մասն են»

Նշեց տրանսպորտի եւ կապի փոխնախարար Հրանտ Բեգլարյանը

«Նովոստի» մամուլի գործակալության հյուրերը երեկ տրանսպորտի եւ կապի փոխնախարար **Հրանտ Բեգլարյանն** ու «Ճանապարհային երթեւեկության ազգային խորհուրդ» ՀԿ-ի նախագահ **Պողոս Շահինյանն** էին: Նրանք ներկայացրեցին վերջերս կառավարության ընդունած ճանապարհային երթեւեկության անվտանգության ազգային ռազմավարությունը:

Տրանսպորտի եւ կապի փոխնախարար Հրանտ Բեգլարյանը նման ռազմավարության ընդունումը բացատրեց ճանապարհատրանսպորտային վթարների հետեւանքներով եւ մասնավորապես տարեցտարի ավելացող մահվան դեպքերով: Նա հայտնեց, որ վերջին 5 տարվա ընթացքում 10 տոկոսով ավելացել է մահացու ելքով պատահարների թիվը: 2008-ին տեղի ունեցած 2202 պատահարների հետեւանքով մահացել է 407 մարդ, ավելի քան 3 հազար էլ ստացել են մարմնական վնասվածքներ: Պատահարների 25 տոկոսը տեղի է ունենում Երեւանում: Տուժողների 75 տոկոսը երեխաներ են, ծերեր, հետիոտներ: Ըստ փոխնախարարի, Երեւանում վթարների 90 տոկոսի դեպքում ամրագոտին կարող էր փրկել մարդկանց կյանքը կամ թույլ չտալ վնասվածքներ ստանալ: Ռազմավարության նախատեսված միջոցառումների նպատակն է առաջիկա 5 տարիներին 10 տոկոսով կրճատել պատահարների քանակը:

Ամրագոտիների հարցը, ինչպես նշեց Հրանտ Բեգլարյանը, լուծման կարիք ունեցող խնդիրների միայն մեկ հարյուրերորդական մասն է: Փաստաթղթով նախատեսվում են համալիր միջոցառումներ, որոնք ընդգրկում են փողոցների վիճակի, ճանապարհային ոստիկանության պատրաստվածության, ճանապարհային նշանների ու գծանշումների եւ ոլորտի բազմաթիվ այլ հարցերի լուծում: Ստեղծվելու են ճանապարհային երթեւեկության կառավարման ապահովման խորհուրդ, քարտուղարություն եւ աշխատանքային խմբեր: Խորհուրդը ղեկավարելու է վարչապետը, անդամները լինելու են կառավարության եւ հասարակական կազմակերպությունների

ներկայացուցիչները: Քարտուղարությունը բաղկացած է լինելու 6-7 հաստիքով մասնագետներից, իսկ աշխատանքային խմբերում ընդգրկվելու են համապատասխան գերատեսչությունների աշխատակիցները:

«Ճանապարհային երթեւեկության ազգային խորհուրդ» ՀԿ-ի նախագահ Պողոս Շահինյանը կարեւորեց ռազմավարության ընդունումը՝ ասելով, որ դրան երկար էին սպասել, եւ որը նշանակում է, որ խնդրի նկատմամբ կա պետական մոտեցում: Նա նշեց, որ համագործակցված աշխատանքը հնարավորություն կտա նվազեցնելու պատահարները, որոնցից շատերը, ՀԿ-ի ղեկավարի կարծիքով, չեն գրանցվում: Տարածված հարցին, թե ինչու է պետք ամրագոտին Երեւանում, Պողոս Շահինյանը պատասխանեց, որ դա անհրաժեշտ է ավտոմեքենայի 30-70 կմ/ժ արագության համար: Նա կարեւորեց բոլորի կողմից դրա կիրառումը եւ ասաց, որ լավ կլիներ, եթե ճանապարհային ոստիկանությունը սեփական փորձով այդ օրինակը ցույց տար, չնայած օրենքով նրանք ազատված են այդ պարտավորությունից: ՀԿ-ի ղեկավարն իր անհամաձայնությունը հայտնեց, թե ամրագոտին կապելը մեր մենթալիտետի մեջ չի տեղավորվում, քանզի նույն հայը այլ երկրներում պարտաճանաչորեն կապում է ամրագոտին եւ պահպանում բոլոր օրենքները: Նա խորհուրդ տվեց հրաժարվել այն մտքից, թե «դա ինձ հետ չի պատահի», եւ հետեւել անվտանգության պահանջներին:

Պատասխանելով ռազմավարության իրականացման ֆինանսավորման հարցին՝ Հրանտ Բեգլարյանը տեղեկացրեց, որ այն կարժենա 10 մլն դոլար 5 տարվա ընթացքում: Դա լրացուցիչ գումար չէ, այլ ներդրում է, որ կատարվելու է համակարգված: Ըստ փոխնախարարի, 5 տարի հետո 70 մլն դոլար վնասը, որ տեղի է ունենում վթարների եւ այլ պատահարների դեպքում, կիսով չափ կկրճատվի:

«Ազգի» հարցին, թե մթնեցված ապակիներ թույլատրելու օրենքը չի՞ հակասում ռազմավարությանը, քանզի չի երեւում, թե ինչ գործողություններ է նախապատրաստվում այդ մեքենաներում գտնվող վարորդը, տրանսպորտի եւ կապի փոխնախարարը պատասխանեց, որ բացի գործարանային արտադրությունից, թույլատրվում է մթնեցնել մեքենայի հետեւի ապակին, մյուս ապակիների միայն 30 տոկոսը, իսկ դիմապակին՝ չի թույլատրվում: Մեր դիտարկմանը, թե դա հիմնականում չի պահպանվում, փոխնախարարն իր անհամաձայնությունը հայտնեց՝ ասելով, որ հիմնականում պահպանվում է որոշ բացառություններով, ինչին, սակայն, չենք կարող համաձայնել:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

«Հայաստան՝ Նոյի երկիր» ֆիլմը՝ հասանելի 200 երկրի 450 մլն բնակչի

Շուտով եվրոպական ամենահայտնի հեռուստաընկերությունները կցուցադրեն «Հայաստան՝ Նոյի երկիր» վավերագրական ֆիլմը: Էկոնոմիկայի փոխնախարար **Արա Պետրոսյանի** վստահեցմամբ՝ այն կօգնի Հայաստանի վարկանիշի բարձրացմանն ու կնպաստի զբոսաշրջության բիզնեսի ընդլայնմանը երկրում: 52-րոպեանոց վավերագրական-ճանաչողական ֆիլմում Հայաստանը պատկերված է որպես գրավիչ զբոսաշրջային երկիր:

«Նպատակն է՝ բարձրացնել եվրոպացիների իրազեկությունը Հայաստանի մասին: Շատ առումներով Հայաստանն այս բիզնեսում առաջամարտիկ է: Մի քանի տարի առաջ դիտել եմ Հայաստանի մասին գովազդները CNN եւ EuroNews հեռուստաալիքներով: Տարածաշրջանում առաջին պետությունն է, որ ներկայացավ աշխարհին եւ հայտնի հեռուստաընկերություններին պատմեց իր անցյալի, մշակույթի մասին», ասում է «Բազզ բիզնես» ընկերության փոխնախագահ **Ջուդիթ Լասֆոմբը**:

Թե ինչու պետք է եվրոպացի զբոսաշրջիկը այցելի Հայաստան՝ իր հանգիստը անցկացնելու, Ջուդիթը պատասխանում է. «Հայաստանն ունի հրաշալի բնություն, պատմամշակութային ավանդույթներ, տարվա յուրահանչյուր եղանակ այստեղ յուրովի գեղեցկությամբ է արտահայտվում, հետեւաբար զբոսաշրջիկները կարող են Հայաստան այցելել յուրահանչյուր եղանակի: Ջրային սպորտաձեւերի սիրահարները կարող են իրենց հանգիստը կազմակերպել Սեւանա լճում, ձմեռային սպորտաձեւերի երկրպագուները՝ Ծաղկաձորում: Եվրոպայում իչերը գիտեն, որ Հայաստանն առաջին երկիրն է, որ ընդունել է քրիստոնեությունը: Նրանց համար բացահայտումներ կլինեն Էջմիածնի եւ մնացած բնակավայրերի հազարավոր եկեղեցիներն ու մատուռները»:

Ֆիլմի նկարահանման համար պետբյուջեն տրամադրել է 225.000 եվրո: Նկարահանման աշխատանքներն ընթացել են ավելի քան 17 ամիս: Համաձայն պայմանագրի, առաջիկա մի քանի տարվա ընթացքում ֆիլմը կհեռարձակվի յուրահանչյուր մայրցամաքում առնվազն երկու անգամ: Ֆիլմի հեռարձակման նպատակով պայմանագիր է կնքվել 200 երկրներում 450 միլիոնանոց լսարան ունեցող իսպանական TVE եւ Սկանդինավյան երկրներում հեռարձակվող Scandinavia հեռուստաալիքների հետ: Բանակցություններ են ընթանում Discovery եւ RAI հեռուստաընկերությունների հետ:

Ճգնաժամը զբոսաշրջության վրա չի ազդել

Էկոնոմիկայի փոխնախարար Արա Պետրոսյանը նկատեց, որ անցյալ վեց ամսվա ընթացքում պահպանվել են 2008-ի ցուցանիշները: «Չնայած որոշակի դժվարություններին՝ դիրքերը պահպանվել են եւ արձանագրվել են նույն ցուցանիշները, ինչ նախորդ տարի: Այս տարի Հայաստան է այցելել 207.000 զբոսաշրջիկ: Հույս կա, որ զբոսաշրջության ոլորտում կունենանք 5-10 տոկոս աճ՝ նախորդ տարվա համեմատությամբ, եւ զբոսաշրջիկների թիվը կհասնի 600.000-ի»:

ՀԱՍՄԻԿ ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌՔ

Հրանուշ Հակոբյանը մասնակցեց Լեհաստանի հայկական համագումարի աշխատանքներին

ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը օրերս մասնակցեց Լեհաստանի հայկական համայնքային կազմակերպությունների հիմնադիր համագումարի աշխատանքներին:

Լեհահայ համայնքը դեռեւս 15-րդ դարից հյուրընկալ երկրի բարձրագույն աստիճանում պատշաճաբար ճանաչված համայնք է: Ոչ պատշաճական տվյալներով՝ Լեհաստանում բնակվում է 25-30 հազար հայ, որոնք հիմնականում բնակվում են Վարշավայում, Կրակովում, Լոձում, Վրոցլավում, Գդանսկում, Կոշալինում, Գրիֆիցեում, Ռոդոնում, Կոլոբժեկում եւ այլուր:

Գրիֆիցե քաղաքում հայկական 21 համայնքային կազմակերպությունների ներկայացուցիչների եւ Լեհաստանում ՀՀ դեսպանության աջակցությամբ կայացած Լեհաստանի հայկական համայնքային կազմակերպությունների հիմնադիր համագումարում քննարկվեցին «Լեհաստանի հայկական համայնքային կազմակերպությունների հիմնախնդիրները եւ զարգացման հեռանկարները» եւ Հայաստան-սփյուռք գործակցության զարգացման հայեցակարգը: Զեկուցումներով հանդես եկան Լեհաստանում ՀՀ դեսպան Աշոտ Գալոյանը եւ ՀՀ Սփյուռքի նախարար տիկին Հակոբյանը, այնուհետեւ տեղի ունեցան ակտիվ եւ բուռն քննարկումներ: Համագումարն ընտրեց 21 մարդուց բաղկացած համայնքի ղեկավար մարմին՝ խորհուրդ: Համայնքի նախագահ ընտրվեց գործարար Կարեն Հովսեփյանը: Համագումարի պատվիրակների առաջարկով հայկական համայնքների համալեհական կազմակերպությունն անվանակոչվեց «Լեհաստանի հայկական համագումար»:

Այցի ընթացքում նախարար Հ. Հակոբյանն այցելեց Կոլոբժեկ եւ Կոշալին քաղաքներ, որտեղ հանդիպումներ ունեցավ տեղի հայ համայնքի ներկայացուցիչների հետ, նրանք տվեցին բազմաթիվ հարցեր ու ստացան պատասխանները:

Մ. ՄԱԿԱՐՅԱՆ

Բուենոս Այրեսի ՀԲԸՄ Մարի Մանուկյան վարժարանի ուսանողները Հայաստանում

Ինչպես նախորդ տարիներին, այս տարի նույնպես Բուենոս Այրեսի ՀԲԸՄ Մարի Մանուկյան վարժարանի ավարտական դասարանի ուսանողներն այցելեցին Հայաստան: Հայրենիք ճամփորդության ավանդական դարձած այս ծրագիրն իրականացվում է ողջ ուսումնական տարվա ընթացքում ՀԲԸՄ կենտրոնում վարժարանի աշակերտների եւ նրանց ծնողների կազմակերպած դրամահավաք միջոցառումների, ինչպես նաեւ կամավոր աշխատանքի շնորհիվ: Հուլիսի 25-ից օգոստոսի 7-ը վարժարանի 34 աշակերտներ եւ 3 ուղեկցողներ Հայաստանում անցկացրին անմոռանալի օրեր՝ համատեղելով օգտակարն ու հաճելին: Խումբը գլխավորում էին վարժարանի հայերենի բաժնի պատասխանատու Ռոսիտա Յուսուֆյանը, ՀԲԸ միության Արգենտինայի վարչության անդամ Խուան Բալյանը եւ ՀԲԸՄ մարզական պատասխանատու Միգել Ակաժան:

Մարի Մանուկյան կրթական հաստատության աշակերտներն այցելեցին Սարդարապատ, Էջմիածին, Գառնի, Գեղարդ, Խոր Վիրապ, Նորավանք, Սիսիան, Տաթեւի վանք, Խնձորեսկ, Սեւան, Դիլիջան, Հաղարծին, Վանաձոր, Հաղպատ, Սանահին, Գյումրի եւ Մարմաշեն, բարձրացան Արագած: Բացի շրջագայություններից, նրանք նաեւ մասնակցեցին ծառատունկի:

Վարժարանի աշակերտներն այցելեցին նաեւ ՀԲԸՄ Հայաստանի ներկայացուցչություն, որտեղ ծանոթացան միության՝ Հայաստանում իրականացրած ծրագրերին, հանդիպեցին անձնակազմի եւ ՀԲԸՄ «Անդրանիկ» սկաուտական ճամբարին մասնակցելու նպատակով Հայաստան ժամանած ՀԲԸՄ Բեյրութի եւ Իրաքի սկաուտական խմբերի հետ: Այս հիշարժան հանդիպման առիթով տեղի ունեցավ ճաշկերույթ:

Օձերն այս տարի ավելի շատ են

Ըստ հանրապետության գլխավոր տոքսիկոլոգ **Գաբրիելյանի՝** օձերն այս տարի շատացել են: Գյուղական համայնքներում՝ հիմնականում Արագածոտնի մարզի գյուղերում, այս տարի արձանագրվել է օձերի խայթոցների 47 դեպք, որոնցից մեկը՝ մահացու: Գյուղատնտեսական աշխատանքների ակտիվացման ժամանակաշրջանում այս թվերը աճման միտում ունեն:

Մայրաքաղաքում 29 մարդ տուժել է, որոնցից մահացել է մեկը: Երեւանում օձերի տարածումը պայմանավորված է հիմնականում վերջին տարիների շինարարությամբ: Ամայի տարածություններում բնակվող սողունները շենքերի կառուցումից հետո չեն հեռանում «իրենց վայրերից», հետեւանքները դժվար է կռահել:

Պարոն Գաբրիելյանը նշեց նաեւ, որ օձի խայթոցի հակաթույն անտիգյուրզին դեղամիջոցի պակաս Հայաստանում չի նկատվում, չնայած ներմուծվող է:

Հեռո՛ւ մնացեք ամայի շինհրապարակներից եւ քարքարոտ վայրերում զբոսնելուց, իսկ դժբախտ պատահարի դեպքում անմիջապես դիմե՛ք բժշկի:

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

AZG NEW 4.QXD 8/21/2009 9:07 PM Page 1

ԱԶԳ

Երեխաների իրավունք

Հայաստանի Հանրաքվեության գրեթե յուրաքանչյուր քաղաքացի կարող է վստահաբար ընդել, որ երեխայի իրավունքները հաճախ են խախտվում սեփական ծնողների կողմից դեռ անհիշելի ժամանակներից: Մեր այս հոդվածի դիտարկումները պարզեցին, որ այդ խախտումները, մեղմ ասած, շարունակություն են գտնում արդարադատության պահապանների թեթեւ ձեռքով նաեւ մեր օրերում: Հատկապես ծանր է այն երեխաների վիճակը, ովքեր սոցիալապես անապահով ընտանիքներում են աղքատ կամ ամուսնալուծված ծնողներից մեկի խնամակալության տակ են: Որքան կանոն, նման երեխաներն ունեն ե՛ւ հոգեբանական, ե՛ւ իրավական պաշտպանության խնդիր: Նրանց մեծ մասը տարբերվում է հասակակիցներից, հաճախ ընկճված է, ոմանք էլ՝ ագրեսիվ: Երեխաները չեն բարձրաձայնում իրենց խնդիրները, բայց նրանց վարքագիծն ամբողջությամբ բացահայտում է խնդրահարույց իրավիճակների առկայությունը:

Ամուսնալուծված ծնողների երեխաների խնդիրների մասին խոսեցինք հոգեբանական գիտությունների դոկտոր **Սվետլանա Հարությունյանի** հետ: «Ընդհանրապես ընտանիքը եռանկյունի է, որի ամեն անկյունը մի անդամն է՝ հայրը, մայրը, երեխան: Եթե անկյուններից մեկը բացակայում է, ուրեմն երեխան կմեծանա աղճատված աշխարհընկալմամբ, ասում է զրուցակիցը: Երեխայի ձեւավորումը կայանում է ծնողների միջանձնային հարաբերությունների ենթաստեղծում, այդ իմաստով այդ հարաբերությունները կարող են ավելի ֆունկցիա կատարել, եթե ծնողներն իրենց զայրույթը բացահայտեն թեկուզ մեկ անգամ»:

Ամուսնալուծված ծնողների երեխաները ավելի ճնշող խնդիրներ էլ ունեն, քան ծնողի կարոտն է կամ հոր եւ մոր անհաշտությունը: «Եթե ծնողը ալիմենտը կամ այլ հոգս լուծում է դժկամությամբ կամ չի լուծում ընդհանրապես, երեխան հայտնվում է նվաստացած վիճակում: Հատկապես դժվար է, երբ հայրն է զրկում տղա երեխային ուշադրությունից, հոգատարությունից, այդ թվում եւ ալիմենտից: Եթե դա 9-10 տարեկան նախադեռահասային շրջան է, երբ տղան պիտի փորձի նույնանալ հոր հետ, նմանվել նրան, կարող է հակադրվել եւ հոր կերպարին հակառակ մեկը դառնալ: Այստեղ կտրուկ հասունացում է տեղի ունենում, ինչը երեխայի հոգեկանի համար այդքան էլ ճիշտ ու լավ չէ: Իսկ 14-15 տարեկանում նույն երեխան հակադարձելու է ծնողներին եւ շահագործելու է նրանց զգացումները, անկախ նրանից, թե ով է, ըստ իրեն, մեղավոր»: Հոգեբանը դեմ է, երբ մայրերը երեխաների միջոցով փորձում են ստանալ ալիմենտը: «Եթե հետո երեխան ցուցաբերի խղճահարություն առաջացնող վարքագիծ կամ ճնշված, բայց ներքին, խորը թաքնված ագրեսիայով, ոչ ոք թող չզարմանա: Մայրն է նրան սովորեցրել այդպիսի վարքագծով փող ստանալ հորից, զգուշացնում է հոգեբանը: Նման վարքագիծը կբարդացնի միջանձնային, միջսեռային շփումները, անձնային կայացումը: Երեխան ոչ միայն ողջ կյանքի ընթացքում հիշում է, թե ինչպես են իր հետ վարվել, այլեւ յուրացրած լինելով «դասերը», նույն կերպ վարվում է արտաքին աշխարհի հետ»: Խնդրի լուծումը զրուցակիցը տեսնում է այսպես. «Եթե ծնողի հետ աշխատանք տարվի, երեխան խնդիրներ չի ունենա: Հիմնական խնդիրն այն է, որ հայ ծնողը երեխային վերաբերվում է որպես իր բացարձակ սեփականության՝ մոռանալով, որ նա առանձին անձ է: Ծնողները երեխաներին ներգործության սեփական օբյեկտ են համարում»:

Երեխայի ուսման ու դաստիարակության, ինչպես նաեւ ալիմենտի մասին խոսակցությունը հոգեբանի հետ անընդհատ թեքվում է կնոջ իրավունքի ուղղությամբ, քանի որ, ըստ զրուցակցիս, հատկապես ալիմենտի վճարումը տղամարդ կոչվածի համար գործիք եւ միջոց է կնոջը անելանելի վիճակի մեջ դնելու, ճնշելու, նվաստացնելու համար:

Գանք երեխայի ալիմենտ ստանալու իրավունքի պաշտպանությանը դատարանում, քանի որ եթե մայրը չի աշխատում, հորից ալիմենտ պահանջելը երեխայի հոգսը փոքր-ինչ թեթեւացնելու միջոց է դառնում: Այստեղ էլ մի ուրիշ հակասություն կա, երեխաների իրավունքը դատարանով հաստատող մայրերի թիվը շատ իչ է: «Ինչո՞ւ» հարցին պատասխանում է Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների դատարանի դատավոր **Գայանե Կարախանյանը**: «Ճիշտ է, ալիմենտի չափը շատերին չի բավարարում, բայց շատերը նման հայցով չեն էլ դիմում դատարան, մտածում են՝ միեւնույն է, չի աշխատում, պետք է գնանք, ընկնենք հակադիր ծառայության հետեւից, զայրանանք եւ այլն: Այսինքն՝ մայրերն իրենք լավություն են անում, հոգեբանորեն ազատում են այդ մարդուն իր պարտավորություններից», եզրակացնում է դատավորը: Ի դեպ, իրավաբան զրուցակիցս դատավորի իրամիդ է հագնում արդեն 20 տարի եւ 40 տարի դատական համակարգում աշխատելու փորձ ունի: «Օրենքն ասում է, որ մեկ երեխայի դեպքում մինչեւ չափահաս դառնալը բռնագանձել ալիմենտ պարտապանի աշխատավարձի մեկ քառորդի չափով, 2-ի դեպքում՝ մեկ երրորդ, իսկ երեքից ավելի՝ աշխատավարձի կեսը: Բայց հիմա ո՞վ է աշխատավարձ ստանում: Տղամարդկանց մեծ մասը, եթե աշխատում էլ է, արդա ոչ պաշտոնական հիմնարկներում, ստվերային տնտեսությունում: Տղամարդը կարող է դասախոսել եւ ստանալ ցածր աշխատավարձ, բայց եթե դիմորդների հետ պարապում է սանը եւ հարկային տեսչությունում նրա վարած գործունեությունը չի արձանագրվում, խնդիր է առաջանում այդ եկամուտը դատարանում ապացուցելու իմաստով: Սա հայցվոր կողմի համար խնդիր է, քանի որ նա փաստացի գիտի, բայց փաստաթղթերով չի կարող տեղեկանք ներկայացնել, որ պատասխանողն ի վիճակի է վճարելու ալիմենտի ավելի մեծ չափ, քան ցույց տրված աշխատավարձի չափն է: Մինչդեռ, նվազագույն՝ 30 000 դրամ աշխատավարձ ցույց տվող ծնողը օրենքով պարտադրվում է վճարել դրա մեկ քառորդը: Ո՞վ չգիտի, որ այդքանը բավարար չէ երեխայի սննդի, նորմալ բարեկեցիկ կյանքի համար: Շատ է լինում, որ որոշում ենք կայացնում պրակտիկայից ելնելով, օրենքը դրած մի կողմ եւ առաջնորդվելով երեխայի շահով ու ակնառու փաստերով, որոնք են պատասխանողի կենցաղն ու ապրելու պայմանները: Այնուամենայնիվ, պատկերացրեք, որ ունեցել ենք 5 000-10 000 դրամ ալիմենտի կայացրած վճիռներ»:

«Աչքաչափով եւ տրամաբանությամբ» վճիռ կայացնելը դատավորը որակում է գործարար շրջանառության սովորույթ: Դատավորը խոստովանում է. «Բոլորս էլ աշխատում ենք երեխայի օգտին, անգամ նրանք, ովքեր չունեն երեխաներ: Հասկանում ենք, որ երեխա պահելն այսօր շատ դժվար է: Անկեղծ ասած, բոլորս աշխատում ենք երեխայի օգտին, բայց դա քիչ է երեխայի համար»:

Ինչ վերաբերում է երեխաների իրավունքներին ընդհանրապես, դատավորը պատմում է մի քանի ցավալի դեպքեր, որոնցից հատկապես դաժանությամբ առաջնահերթ են հոգեբանական ճնշումները, որոնք, սակայն, օրենքի ուժով գրեթե չեն պատժվում: «Կան շատ դեպքեր, պատմում է Գ. Կարախանյանը, որ ծնողներից մեկը երեխային իր կողմն է գրավում եւ դատարանում պատճառաբանում, թե երեխան իր հետ կապված է ավելի, քան մոր հետ, որ բնականաբար հարցն իր օգտին լուծի»: Սա արդեն բարոյական վնաս կարող է որակվել: Սակայն. «Կա քաղաքացիական օրենսգրքի 19-րդ հոդվածը, որը սահմանում է հատուկ դեպքերի ցանկը: Մնացած դեպքերի համար կոնկրետ բարոյական վնասի փոխհատուցման ու դրա չափի մասին խոսք չունենք, բայց դա յուրաքանչյուր գործի քննության ժամանակ հաշվի պիտի առնվի: Դա արդեն գալիս է գործի էությունից, կողմերից եւ նաեւ դատավորի անձից: Պետք է իմանաս՝ ով է քո առաջ կանգնած, եւ երեխան ինչ խնդիրներ կարող է ունենալ: Մենք ունեցել ենք գործեր, որ երեխաները վիրավորանքից հրաժարվել են ալիմենտից: Պատճառաբանությունն էր, որ եթե հայրը 10-15 000 դրամը պիտի պարտադրաբար տա ու չծփվի, չզբաղվի իրենցով, հատկապես, երբ երեխան տղա է, այդ գումարը պետք չէ: Հոգեբանական պահը սա է, որ ավելի կարեւոր է, քան մի քանի կոպեկը»:

Տիկին Կարախանյանին հարցնում ենք իրենց վճիռների հետագա ճակատագրի մասին: Նա պատմում է, որ դատավորը կատարածուի միջոցով իր որոշման կատարման ընթացքին առաջ էր հետեւում, իսկ հիմա հարկադիր կատարման ծառայության գործառույթն է դա, որի աշխատանքներից, բնականաբար, քչերն են գոհ: Զրույցի ընթացքում զրուցակիցս ասաց հետեւյալը, որ, բնականաբար, դատերի ժամանակ չի կարող արտաբերել, օրենքից դուրս է, բայց, թերեւս, օրենքի չափ կարեւոր է: «Ինձ այնքան չեն հուզում ամուսնալուծության հետ կապված հարցերը, որքան երեխաները: Ես կուզենամ, որ մեր ծնողներն ավելի հոգատար լինեն իրենց երեխաների նկատմամբ, որ վաղուց ի վեր կար մեր ազգի մեջ, հիմա վերանում է: Մեկ-մեկ ուրախանում եմ, որ բաժանվող ծնողները բարեկիրթ են: Նրանք երեխայի հոգեբանության վրա չեն ազդում, դրանով իրարից ոխ չեն հանում, անձնական հարաբերությունների համար երեխային միջոց կամ գործիք չեն սարքում»: Դրական տպավորությունը կին դատավորի հոգատար կեցվածքից շոշափվող հարցում մի պահ է միայն գոհացնում մեզ, երբ հասկանում ենք, թե ինչ կլիներ, եթե նրա մտածելակերպը չունեցող դատավորները շատանային:

Երեխայի իրավունքների պաշտպանության հարցականները մեզ բերեցին նաեւ փաստաբանի մոտ, որակիչայում նման խնդիրների պակաս չի զգացվում: Փաստաբան **Նազելի Վարդանյանն** ավելի կոնկրետ է արտահայտվում. «Ալիմենտը ծնողի օրենքով սահմանված ֆինանսական պարտավորությունն է երեխայի կարիքների համար: Դժվարություններ են առաջանում հատկապես հարկադիր կատարման դեպքում, քանի որ շատ դեպքերում պարտավոր ծնողը խուսափում է իր պարտականության կատարումից: Ալիմենտի բռնագանձման մասին դատական պրոցեսն այնպիսին է, որ միշտ բողոքարկվում է: Կամ եթե պարտապանը չի աշխատում կամ ի վիճակի չէ մուծելու, գույքից բռնագանձում է արվում, իսկ դա բավականին աշխատատար պրոցես է: Շատ ժամանակ գործ ես ունենում հարկադիր կատարման գրասենյակի տեսուչների հետ, որտեղ սուբյեկտիվ հանգամանքն ավելի շատ է: Հարկադիր կատարողը կարող է եւ խուսափել, հնարավոր է, որ մյուս կողմի հետ ընդհանուր համաձայնության գա, կարող է քաշքշուկից խուսափելու համար ինքը խուսափել աշխատանքային պարտավորությունների պատշաճ եւ ժամանակին կատարումից: Դժվարություններ կան, հարկադիր կատարման պրոցեսից շատերն են բողոքում: Վերջին տարիներին ահագին մարդ ազատվել է, բայց հարկադիր աշխատանքից խուսափելու դեպքերն ավելի շատ են:Պարտատերը չի կարող վերահսկել հարկադիրի աշխատանքը, որովհետեւ ինքը հարկադիրի աշխատանքի սկիզբն ազդարարող թերթիկն ստանալուց հետո տեղյակ չէ, հարկադիր կատարողը գնացե՞լ է պարտաշիրոջ տուն, թե՞ ոչ, տեղյա՞կ է՝ պարտատերն աշխատում է, թե ոչ, օրենքով սահմանված կարգով հարկադրե՞լ է նրան վճարել ալիմենտը, թե՞ ոչ: Բացարձակ չես կարող վերահսկել»:

Այս առումով կատարողական այս քաշքշուկը բոլոր երկրներում էլ նույնն է, որքան եվրոպաներում չեն հասնում մի պարզ պատճառաբանությամբ, այնտեղ քաղաքակիրթ ամուսնալուծությունն ավելի հարգի է, քան թշնամանքի վերջին՝ հայկական աստիճանը:

ԴԱՀԿ-ի աշխատանքին անձամբ ծանոթ լինելով հանդերձ, ցանկացանք, այնուամենայնիվ, որպես լրագրող հետաքրքրվել այս կառույցի աշխատանքների կազմակերպմամբ հատկապես աչքից հեռու մարզերում ու պատասխանատուներից լսել մի քանի հարցերի պատասխաններ, որոնց թվում էր, թե ինչպե՞ս է, որ հարկադիրը չի կարողանում ճիշտ ժամանակին բռնագանձել երեխայի կենսապահովման համար հաճախ շատ անհրաժեշտ ալիմենտը: Լրատվական բաժնի պատասխանատուի միջոցով փոխանցված պատասխանը ԴԱՀԿ ծառայության երիտասարդ պետից բավականին հնաոճ եւ բյուրոկրատական էր՝ հարցերը գրավո՛ր ներկայացրեք: Ներկայացնելուց եւ մեր գրավոր խնդրանքից հետո էլ, թե մեզ պետք է առերես հարցազրույց, ծառայության պետը փոխանցեց ավելի հին ու վաղուց արդեն մոդայից դուրս մի ուրիշ պատասխան՝ Ձեր հարցերին չենք կարող բանավոր պատասխանել: Նման խուճապից պարզ է մի բան, ԴԱՀԿ-ն գլխաքաշ է անում երեխայի ալիմենտների ստացման որոշումների կատարումը հնարավորինս հեռու եւ հնարավորինս անհայտ ժամանակով:

Հարկադիրը՝ օրենքի կիրառման գերեզմանափոր

ԴԱՀԿ ծառայությունը գլխաքաշ է անում օրենքի պահանջը՝ ոտնահարելով երեխաների իրավունքները

ՍՈՒՍԱՆՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՕՐԻՆԱԶԱՆՑՈՒՄ

Պարզ, անկեղծ, հասարակ...

Ո՞ւմ համար են օրենքներ ստեղծվում: Եթե կարծում եք՝ բոլորի, սխալվում եք, գոնե այնպիսի երկրների դեպքում, ինչպիսին, ցավոք, Հայաստանն է: 100-ամյակներ պետականություն չունենալու պատճառով ձեւավորված մերօրյա հայը՝ լինի ամենասովորական քաղաքացի թե բարձրաստիճան պաշտոնյա, անկախ կրթական ու այլ ցենզերից, վարժված չէ հարգելու օրենքները, էլ չասենք, որ նրան դեռ երկար ժամանակ չի «սպառնում» օրինապաշտ դառնալը: Իսկ հասարակական կյանքում խառնաշփոթից խուսափելու համար քիչ թե շատ, կամա թե ակամա բավարարվում է՝ չգրված օրենքներ ու ավանդույթներ պահպանելով, որոնք, իրենց հերթին անթերի չլինելով, հատկապես նորանկախ Հայաստանի տարիներին ձեւախեղվում-իմաստափոխվում կամ ընդհանրապես դուրս են մղվում բարոյաարժեքային «շրջառությունից»՝ իրենց տեղը զիջելով մոդայիկ, «ճոճռան» եւ օտար սովորույթներին ու նորմերին:

Օրինազանցությունն ամենուրեք է՝ փողոցում, որտեղ հետիոտներն ու վարորդներն իրենց այնպես են զգում ու պահում, կարծես երթեւեկության կանոնները դեռ 100 տարի հետո են ստեղծվելու, ճանապարհային նշանները էլ միայն նյարդայնացնելու կամ ուշադրություն շեղելու համար են այստեղ-այնտեղ փակցված-գծված-նշված: Բազմաստեսակ գրասենյակներում, հիմնարկություններում, սպասարկման կետերում, վաճառատներում, հասարակական վայրերում, որտեղ որոշում կառավարական 10 որոշում եւ խորհրդարանական դակիչով անցած 2-3 օրենք է խախտվում՝ չիմացությունից, անտարբերությունից, ծուլությունից, վերահսկողության բացակայությունից, պատժվելու վտանգի զգացողության բթացումից կամ իսպառ բացակայությունից: Վերջինը վերաբերում է հատկապես նրանց, ում նյութական ապահովվածության, «վերեւներում» ծանոթ-բարեկամ ունենալու (եթե հենց իրենք չեն այդ «վերեւները») եւ վերջապես սովորական անդաստիարակության պատճառով թվում է, թե իրենք «ուրիշ» են, եւ իրենց կարելի է ԱՄԵՆ ԻՆՉ:

Սահմանադրություն, դատական համակարգ, օրենսդրություն, ժողովրդավարություն, մարդու իրավունքներ... Այդ ամենն առանձին-առանձին ու միասին ողջունելի պես պայթում են, հենց հանդիպում են ամենակարող ՓՈՂԻՆ: Հետաքրքիր է, վիճակագրություն կա՞, թե, ասենք, վերջին 5 տարում քանի մեծահարուստ օրինախախտ է հայտնվել ճաղերի հետեւում: Կարծում եք՝ ոչ մի: Երեւի, իսկ եթե բացառիկ դեպքեր էլ հանկարծ նկատվեն, դրանք էլ գուցե այն պատճառով, որ իրար հետ «լեզու» չեն գտել կամ օրինախախտն այդ խանգարում էր իրենից հզոր որեւէ մեկին:

Մերթ ընդ մերթ, հատկապես նախընտրական կամ հետընտրական ժամանակաշրջանում միամսյակի պես ինչ-որ բան է նկատվում՝ որեւէ բնագավառում ինչ-որ չափով կարգ ու կանոն հաստատելու ուղղությամբ, բայց հետո ամեն ինչ վերադառնում է «ի շրջանս իւր»: Եվ մեզանից նրանք, ովքեր դեռ հույսեր փայփայելու չափ միամիտ են, հերթական հիասթափությունն են ապրում, իրականության աչքերին նայողներն էլ հերթական անգամ հասկանում են, որ որեւէ գործողություն ցանկալի արդյունքի չի հանգեցնի ու չի էլ կարող, քանի դեռ գործող անձինք են նույնը: Գումարելիները պետք է փոխել, եթե անկեղծ ցանկություն կա նախնական-սովորականից տարբեր գումար ստանալու: Իսկ եթե ոչ, գոնե կարելի է նոր սահմանադրություն գրել-անցկացնել, որտեղ ընդամենը մեկ դրույթ կլինի. «Իրավացի է նա, ով ավելի շատ փող կամ ավելի «թափով» ծանոթ ունի»: Պարզ, անկեղծ, հասարակ: Ոչինչ, որ նաեւ՝ վիրավորական: Հայաստանի Հանրաքվեության բոլոր օրենքներն էլ կա՛մ չեղյալ հայտարարել, կա՛մ բխեցնել վերոնշյալ դրույթից: Այդ դեպքում գոնե խաբվածության զգացողություն չի լինի:

ԱՐԾՐՈՒՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ
report.am

AZG NEW 5.QXD 8/21/2009 9:07 PM Page 1

Վլադիմիր Պուտինի «տասնամյակը» բարձրագույն իշխանության մեջ

Մինչ «**Ազգ**» թերթի կոլեկտիվը արձակուրդային տվյայանմների մեջ էր, Ռուսաստանի քաղաքական կյանքում արձանագրվեց մի իրադարձություն, որն ինչ-որ տեղ համարվեց ուղենշային. նշվեց երկրի բարձրագույն իշխանական կառույցում Վլադիմիր Պուտինի գտնվելու տասը տարին՝ ութը՝ որպես նախագահ, եւ երկուսը՝ որպես վարչապետ: Բնականաբար, ռուսաստանյան եւ համաշխարհային լրատվամիջոցներում բազմաթիվ նյութեր հրապարակվեցին «պուտինիզմի» էության, նրա անցյալի ու ներկայի, հեռանկարների վերաբերյալ: Կարծիքները տարաբնույթ էին, երբեմն նույնիսկ իրարամերժ, ինչը բացատրելի է:

Ինչո՞վ է Պուտինը մտել Ռուսաստանի պատմության մեջ եւ ի՞նչ շանսեր ունի նա իր հետագա քաղաքական կարիերայում: Առաջին հերթին նրա խոշորագույն ծառայությունն է համարվում լայն շոշափուկները տարածած անջատողականության ջախջախումը եւ, ըստ էության, ռուսաց պետության մասնատման կանխումը: Ռուս նացիոնալիստների կարծիքով, շահելով երկրորդ չեչենական պատերազմը, նա ազգային պետականությանը հաղորդեց կայսերապետական բնույթ:

Ստանձնելով գահը՝ Պուտինը ժառանգեց օլիգարխիական կապիտալիզմի մի համակարգ, որտեղ քաղաքական ու տնտեսական առանցքային հարցերում իրենց կամքն էին թելադրում մի խումբ մեծահարուստներ, հիմնականում՝ հրեաներ: Վերջիններիս ձեռքում էին կենտրոնացված նաեւ առաջատար հեռուստաալիքները եւ առավել ազդեցիկ թերթերը: Պուտինը սանձահարեց նրանց: Ովքեր չենթարկվեցին՝ սնանկացան, արտասովեցին ու նույնիսկ հայտնվեցին «հեռավոր» վայրերում:

Որպես շրջահայաց անձ, Պուտինը չէր կարող չնկատել լիբերալ շատ հայացքների քայքայիչ ու այլասերիչ ազդեցությունը Ռուսաստանի պես խայտաբղետ ու լայնածավալ տերության վրա: Հրաժարվելով դրանցից՝ նա ստեղծեց սեփական կենտրոնաձիգ իշխանությունը՝ մասամբ վերականգնելով նաեւ պետության կարգավորիչ ու վերահսկիչ դերը:

Պուտինը վերացրեց նաեւ Ռուսաստանի ներքին կառավարման վրա արտաքին ներգործության ազդեցությունը, երբ, ասենք, ամերիկացիներն էին պարտադրում այս կամ այն նախարարի թեկնածությունը: Նա նորացրեց բանակը,

ռազմարդյունաբերական համալիրը, բարձրացրեց ռուսական պետության միջազգային դերն ու քաջը համաշխարհային գործերում:

Անշուշտ, «հոբելյանական» օրերին Պուտինի հասցեին չինչեցին սոսկ գովաբանական ներբողներ: Նրա գործունեության մեծագույն բացը համարվեց այն, որ այդպես էլ արդյունավետորեն չօգտագործվեցին բազմամիլիարդանոց նավթադոլարները: Ջարդիականացվեց էկոնոմիկան, որն այդպես էլ մնաց անմրցունակ արեւմտյան երկրների հանդեպ: Ցիաղթահարվեց կոռուպցիան: Սրվեցին հարաբերությունները ԱՊՀ որոշ երկրների հետ եւ այլն:

Ռուսաստանում շատերը չներեցին Պուտինին, որ նա չգնաց նախագահական երրորդ ժամկետին, ստեղծեց երկիշխանություն, ինչը, որոշ փորձագետների կարծիքով, խանգարում է երկրի զարգացմանը: Երկյակի առկայությունը, անտարակույս, բնորոշ չէ Ռուսաստանի միապետական պատմությանը: Սակայն, ըստ էության, այն իրո՞ք «երկգլխանի» է: Համենայն դեպս, քաղաքական մասնագետների մեծ մասի կարծիքով, Պուտինն իր ձեռքին է պահում իշխանության լծակները որպես գործադիր մարմնի ղեկավար եւ որպես կառավարող կուսակցության (պառլամենտի) լիդեր:

Այս կարգավիճակը ուշադրություն է հրավիրվում նորընծա հրապարակային մի երեւույթի վրա: Հավանաբար Հայաստանում էլ նկատած կլինեն, որ վերջին շրջանում վարչապետ Վլադիմիր Պուտինը չի իջնում հեռուստաէկրանից, ընդ որում, ոչ միայն իր ներռուսական պաշտոնական ուղեւորություններով, այլեւ արտաքնապես բավականին տպավորիչ, երբեմն նույնիսկ էկզոտիկ իրավիճակներում: Ահա նա գալիս է պիտերամերձ Պիկալյովո «սուրբ» առաքելությամբ՝ հանգստացնելու գործազրկությունից ծայրահեղ հուսահատության գիրկն ընկած բանվորներին: Ցինաստանին սահմանամերձ ուսուրիական տայգայում խորհրանշաբար «սանձում է» վագրին: Օխոտյան ծովում գրկում է կետաձկանը: Ծովախցաստրով սուզվում է Բայկալի խորը: Լեռնային Տուվայում թանկարժեք ժամացույց է նվիրում աշխարհից կտրված հովվին: Այցելում է երաշտից չորացած Հարավային Ուրալ եւ իր հետ բերում... անձրեւ (իսկա՞ն հրաշագործություն) եւ այլն:

Արդ, որպես իրադարձությունների պատահական ընթա՞գք է սա ներկայացվում, թե՞ այդ ամենի մեջ պետք է տեսնել իշխանության նոր որակի դրսեւորման միտում: Ռուս մտավորականության ազգայնական խավը հակված է այն մտքին, որ Պուտինը փորձում է նորովի վերադառնալ բարձրագույն գահին, որ նախկին Պուտինը սպառել է իրեն, եւ ծնունդ է առնում նոր գերեկավար: Իր զարգացման մեջ կանգ առած երկիրը փտում է, եւ նա, հասկանալով այդ ամենը, կփորձի նոր մեթոդներով կանգնեցնել ռուսաց պատմական տարածքի քայքայումը ժամանակի եւ ռեսուրսների սուր պակասի պայմաններում:

Կարելի է ասել, որ «պուտինիզմի» հանդեպ իրենց վերաբերմունքի մեջ բավականին միանշանակ ու համերաշխ էին արեւմտյան լրատվամիջոցները: Իհարկե, բացասական իմաստով. Պուտինի ուղղահայացը ավտորիտար է, ոչ դեմոկրատական, չկա խոսքի ազատություն, խախտվում են մարդու իրավունքները եւ նմանատիպ այլ ծեծված ստանդարտներ: Իրականում, ինչպես միշտ, անթաքույց դժգոհություն է հայտնվում այն իրողությունից, որ Ռուսաստանը կամաց-կամաց ոտքի է կանգնում ու «անամոթաբար» հավակնում գերտերության կարգավիճակին:

Ինչպե՞ս կզարգանան հետագա իրադարձությունները, ի՞նչ ընթացք կստանա Պուտին-Մեդվեդեւ երկյակի համագոյակցության հանգուցալուծումը, դժվար է ասել: Առայժմ առավելությունը տրվում է նախկին ամենատես չեկիստին: Համենայն դեպս, հազիվ թե հայերս ընդունակ լինենք անելու կանխատեսումներ, երբ ռուսներն իրենք իրենց երկիրն ու պատմությունը շարունակում են անվանել անկանխագուշակելի, հանելուկային, խելահեղ:

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Մոսկվա

Հոլանդիայում աշխատանքից ազատել են մահմեդական գործչին

Արեւմուտքում խոսքի ազատությունը գովաբանելու փոխարեն նա հաղորդում է պատրաստել իրանական հեռուստատեսության համար

Իրանական Press TV հեռուստատեսության համար հաղորդում պատրաստելու պատճառաբանությամբ Հոլանդիայում աշխատանքից ազատվել է եգիպտական ծագումով արաբ մտածող Թարեք Ռամադանը: Նա սերում է եգիպտացի հայտնի իսլամագետ Հասան ալ Բեննայի տոհմից, «Թայմ» հանդեսը նրան դասել է դարաշրջանի խոշորագույն իսլամ մտածողների շարքը, դասավանդել է Օքսֆորդի համալսարանում եւ եղել Մեծ Բրիտանիայի վարչապետ Թոնի Բլերի խորհրդականը:

Աշխատանքից վտարվելու պահին Թարեք Ռամադանը՝ որպես խորհրդական, աշխատում էր Ռոտերդամի քաղաքապետարանում: Նա մեղադրվել է Իրանի իսլամական վարչակարգին աջակցելու մեջ: Ի դեպ, մայիսին Ռամադանը դարձել էր նաեւ Հոլանդիայում գործող միասեռականների միությունների հարձակումների թիրախը: Նա լուրջ չի ընդունել հակամիասեռականության մեղադրանքները: Ինչ վերաբերում է Իրանի իսլամական վարչակարգին աջակցելու ամբաստանությանը, ապա Ռամադանն ասել է. «Որեւէ երկրի հեռուստատեսության համար հաղորդում պատրաստելը դեռ չի նշանակում պաշտպանել այդ երկրում գործող կարգերը: Եթե այդպես լիներ, ապա ինձ մեղադրողները վաղուց ճնշում կգործադրեին Հոլանդիայի կառավարության վրա՝ խզելու Իրանի, Սաուդյան Արաբիայի, Եգիպտոսի, Իսրայելի եւ Ցինաստանի հետ հարաբերությունները»:

Հատկանշական էր, որ Ռամադանը, լինելով Շվեյցարիայի քաղաքացի, մուտքի վիզա չստանալու պատճառով չի կարողանում մուտք գործել ԱՄՆ, Իսրայել, նշված արաբական երկրներ, ինչպես նաեւ Թունիս, Լիբիա եւ Սիրիա: Այլ կերպ՝ նրան, բացի Հոլանդիայից, հալածում են նաեւ ԱՄՆ-ում, Իսրայելում, արաբական մի շարք երկրներում: Աշխարհում ամեն ինչ հարաբերական է: Թարեք Ռամադանի աշխատանքից վտարումը եւ վտարման պատճառաբանությունը ցույց են տալիս, որ ավելի քան հարաբերական է Հոլանդիայի պես արեւմտյան երկրներում խոսքի ազատությունն ու ժողովրդավարությունը, երբ խոսքը վերաբերում է նրանց, ովքեր ժողովրդավարության եւ խոսքի ազատության ձեռքբերումների համար չեն գովերգում Արեւմուտքին:

Հ. Ջ.

ՀԱՄԱՌՈՏ

Սայանո-Շուշենսկայա ՀԷԿ-ի վթարի զոհերի թիվն աճում է

Ռուսաստանի արտակարգ իրավիճակների նախարարությունը հաղորդում է երկուշաբթի երկրի խոշորագույն՝ Սայանո-Շուշենսկայա հիդրոէլեկտրակայանի վթարից դրանցված զոհերի թվի ավելացման մասին: Ուրբաթ օրը փրկարարները հայտնաբերել են ՀԷԿ-ի եւս 9 աշխատակիցների մարմինները՝ վթարի զոհերի թիվը հասցնելով 26-ի: Անհայտ կորած է համարվում շուրջ 50 մարդ: Ռուսաստանի վարչապետ Վլադիմիր Պուտինը տեղում ծանոթացել է աղետի հետեւանքներին: Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդեւը երեկ վարչապետին հանձնարարել է քայլեր ձեռնարկել տարածաշրջանում գործող խոշոր ձեռնարկությունների եւ բնակչության անխափան էլեկտրամատակարարումը ապահովելու համար: Խորհրդային Միության ժամանակաշրջանում կառուցված Սայանո-Շուշենսկայա հիդրոէլեկտրակայանը Ռուսաստանում ամենախոշորն էր: ՀԷԿ-ի սեփականատեր «Ռուս-Հիդրո» ընկերությունը հայտարարել է, որ կայանի վերջնական վերականգնման համար կպահանջվի առնվազն 4 տարի:

«Ուկրաինայի ապագան կապված է Եվրոմիության հետ»

«Ուկրաինայի ապագան եւ նրա զարգացման ռազմավարությունը կապված են Եվրոմիության հետ», հայտարարել է Ուկրաինայի կառավարության ղեկավար Յուլյա Տիմոշենկոն Ուկրաինացիների համաշխարհային կոնգրեսի տնօրենների խորհրդի ժողովում, որը տեղի է ունենում Լվովում: «Ուկրաինան սկզբունքորեն նոր հարաբերություններ է կառուցել Եվրոմիության հետ: Այս տարվա վերջին կամ հաջորդ տարվա սկզբին մենք պլանավորում ենք Եվրոմիության հետ ստորագրել հատուկ համաձայնագիր քաղաքական ասոցիացիայի շուրջը», ասել է նա: Դրանից հետո, վարչապետի խոսքով, «Եվրոմիության դռներն Ուկրաինայի համար բաց կլինեն»: «Հնարավոր է՝ ոչ այսօր, բայց հաստատ՝ վաղը», հավելել է Տիմոշենկոն:

Եվրոմիության հետ ստորագրման պատրաստվող համաձայնագիրը, նրա խոսքով, «նախատեսում է ազատ առեւտրի լիամասշտաբ գոտու ստեղծում»: Բացի դրանից, Ուկրաինան եւ Եվրոմիությունը համաձայնության են հասել այցագրային ռեժիմի պարզեցման շուրջը:

Լուկաշենկոն չի պատրաստվում նոր զիջումների դիմել

Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն հայտարարել է, որ արեւմտյան տերությունները չպետք է նոր զիջումներ ակնկալեն պաշտոնական Մինսկից, եթե իրոք ցանկանում են բարելավել հարաբերությունները Բելառուսի հետ:

Լուկաշենկոն ձգտում է բարելավել հարաբերությունները Եվրոմիության հետ այն բանից հետո, երբ ռուս-բելառուսական հարաբերություններում որոշակի լարվածություն առաջացավ էներգետիկայի ոլորտում ծագած անհամաձայնության հողի վրա: Եվրոմիության հետ հարաբերությունները բարելավելու նպատակով Մինսկը բարեփոխել է երկրի ընտրական օրենսգիրքը, ընդլայնել ընդդիմության եւ անկախ մամուլի իրավունքները:

ԱՄՆ-ի օդուժը հրթիռային հարված է հասցրել Պակիստանի հյուսիս-արեւմուտքին

Ամերիկյան անօդաչու օդուժը, որը բազավորված է Աֆղանստանում, հերթական հրթիռառմբային հարվածն է հասցրել Հարավային Վազիրստանի շրջանին, որտեղ, ըստ հետախուզության տվյալների, թաքնվում են «Թալիբան» եւ «Ալ Ղաիդա» շարժումների ծայրահեղականները: Հարձակման հետեւանքով 15 մարդ զոհվել է: Ըստ նախնական տվյալների՝ զոհվածների մեծ մասը ծայրահեղականներ են: Այս մասին հաղորդել են տեղական զանգվածային լրատվամիջոցները: Հարձակումից հետո թալիբ գրոհայինները շրջապատել են հարվածի շրջանը եւ դուրս տարել զոհվածների մարմինները: Ամերիկյան անօդաչու օդուժը կանոնավորապես հրթիռառմբային հարվածներ է հասցնում Աֆղանստանին սահմանակից ֆեդերալ կառավարման ցեղերի տարածքին, որտեղ ապաստան են գտել «Թալիբան»-ի եւ «Ալ Ղաիդա»-ի շատ ծայրահեղականներ: Նման հարձակումներից մեկի հետեւանքով օգոստոսին 5-ին ոչնչացվել է պակիստանցի թալիբների պարագլուխ Բեյթուլլա Մեհսուդը:

Վրաստանի վարչապետն ու տնտեսական զարգացման նախարարն «իրար չեն հարմարվել»

Վրացական իրականության մեջ պաշտոնների հերթափոխությունները այնպիսի արագությամբ են տեղի ունենում, որ ավելի հաճախ դժվար է լինում արձագանքել: Սակայն ցայսօր աշխատանքից հեռանալու պատճառ չէր նշվում անբավարար գնահատականը, որ կարող է երկրի վարչապետը տալ որեւէ նախարարի: Ամենայն հավանականությամբ, Վրաստանում երիտասարդ կառավարությունը նոր աշխատող է որդեգրում:

Վրաստանի վարչապետ Նիկոլոզ Գիլաուրին զբաղեցրած պաշտոնից հեռացրել է երկրի տնտեսական զարգացման նախարար Լաշա Ժվանիային: Կառավարության 6 ամսվա աշխատանքի հաշվետվությունը ներկայացնելիս Վրաստանի վարչապետը հայտարարել է, որ դժգոհ է նախարարի աշխատանքից եւ այդ մասին տեղեկացրել է երկրի նախագահին:

Վրացական լրատվամիջոցները տեղեկացնում են, որ վարչապետ Գիլաուրին տնտեսական զարգացման նախարարության աշխատանքն ամենաանարդյունավետն է գնահատել, ավելացնելով, որ նախարարությունը չի կարողացել համակարգել աշխատանքները էներգետիկայի նախարարության հետ՝ ՀԷԿ-ի կառուցման հարցում: Տնտեսական զարգացման նախարարությունն, ըստ Վրաստանի վարչապետի, թերացել է շատ հարցերում՝ ուշացնելով անգամ ներդրումային ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ պայմանագրերի ձեւակերպումները: Վրաստանի վարչապետը զգուշացնում է արել նաեւ կառավարության մեկ այլ անդամի՝ առողջապահության նախարար Ալեքսանդր Կվիթաշվիլուն:

Չբաղեցրած պաշտոնից հեռացված տնտեսական զարգացման նախարար Լաշա Ժվանիան, իր հերթին, լրատվամիջոցներին տեղեկացրել է վարչապետի հետ ունեցած տարաձայնությունների մասին: Ժվանիան Գիլաուրիին անվանել է «թույլ վարչապետ, որը չգիտի կառավարման ու մենեջմենթի տարրական սկզբունքները»: Ժվանիան նաեւ տեղեկացրել է, որ ինքն է հրաժարականի որոշում կայացրել վարչապետի հետ խոսակցությունից հետո:

Հետաքրքրական է, որ, վերջին իրադարձությունների տրամաբանության մեջ, երբ պաշտոնից հեռացվող կամ հեռացող գրեթե բոլոր անձինք անցնում էին ընդդիմության շարքերը, Լաշա Ժվանիան հայտարարել է, որ մնում է Սակաշվիլու թիմում, քանի որ հավատում է Վրաստանի նախագահի «ճիշտ» քաղաքականությանը:

Ա. Հ.

AZG NEW 6.QXD 8/21/2009 9:08 PM Page 1

«Իրանական ֆիլմերի ընտրությունը «Ոսկե ծիրանում» այնման էլ օբյեկտիվ չէ»

Իրանի Իսլամական Հանրապետության պետական ռադիոհեռուստատեսության լրագրող Ժորժ Աբրահամյանի հարցազրույցը իրանահայ կինոքննադատ եւ ռեժիսոր Ռոբերտ Սաֆարյանի հետ

Ռոբերտ Սաֆարյանը (ծնվ. 1954, Թեհրան) Թեհրանի ԻՐԻԲ ֆոլեջում ուսանել է կինոյի պատմություն եւ պարսկական գրականություն: Անգլերենից պարսկերեն է թարգմանել Քրիստիան Մեցի «Կինոյի նշանաբանություն», Ռոբին Վուդի «Հումանիզմը կինոքննադատության մեջ», Դեյվիդ Բորդուելի եւ Քրիստիան Թոմսոնի «Կինոյի պատմության ներածություն» աշխատությունները: Միքելանջելո Անտոնիոնիի «Արկածի վերլուծությունը», Ալֆրեդ Հիչքոքի «Կասկածի սվերի» վերլուծությունը» գրքերի թարգմանիչն է: Իրանական մամուլում հրապարակել է բազմաթիվ քննադատական հոդվածներ կարճամետրաժ եւ վավերագրական ֆիլմերի մասին: Եղել է Քիչի վավերագրական ֆիլմերի 2-րդ եւ 3-րդ կինոփառատոների ընտրող հանձնաժողովի եւ 4-րդ կինոփառատոնի ժյուրիի անդամ, իսկ 2003-ին եւ 2004-ին՝ Թեհրանի կարճամետրաժ ֆիլմերի կինոփառատոնի ընտրող հանձնաժողովի անդամ: Թեհրանում հայերեն հրապարակվող «Հանդես» երկշաբաթաթերթի գլխավոր խմբագիրն է, «Գրական հանդեսի» եւ «Արվեստի» խմբագրական խորհրդի անդամը:

- Պրն. Սաֆարյան, դուք առաջին անգամ էիք մասնակցում «Ոսկե ծիրան» կինոփառատոնին, այդպես չէ՞:

-Այո՛, սակայն միշտ հետեւել եմ փառատոնի ընթացքին, քանի որ ճանաչում եմ կազմակերպիչներին, բացի այդ, ունեմ ընկերներ, որոնք գրեթե ամեն տարի մասնակցում են: Նրանցից իրանահայ կինոռեժիսոր Վարուժ Քարիմ Մասիհին 2006-ին փառատոնի ժյուրիի անդամներից էր, վերադարձից հետո զրուցեցինք եւ երկու հոդված հրապարակեցինք հրատարակվող ֆիլմերով: Փառատոնի օրերին կինոթատրոնների առջեւ հերթեր են գոյանում, եւ դրանից մթնոլորտը բավականին աշխուժանում է:

Կցանկանայի անդրադառնալ եւս մեկ կարեւոր խնդրի, որ կապված է «Ոսկե ծիրանի» արտասահմանյան ֆիլմերի ընտրության հետ: Իհարկե, ես կոնկրետ չգիտեմ, թե ինչ օրինաչափություններով են ֆիլմերն ընտրվում, սակայն Իրանի վերաբերյալ պետք է ասեմ, որ իրանական ֆիլմերի ընտրությունն այնքան էլ օբյեկտիվ չէ: Ենթադրում եմ, որ իրանական ֆիլմերը հիմնականում ընտրվում են Ռոտերդամի կինոփառատոնից՝ նկատի առնելով երկու փառատոնների սերտ համագործակցությունը: Կարծում եմ, դրա փոխարեն կարելի է իրանական ֆիլմերն ընտրել՝ իրանական ֆիլմերի շուկան ուսումնասիրելով: Պետք է նկատի առնել, թե տվյալ տարվա ընթացքում ո՞ր ֆիլմն է արժանացել կինոհանդիսատեսի բարձր գնահատականին կամ լավագույն ֆիլմ ճանաչվել:

- Ձեր կարծիքով, «Ոսկե ծիրանը» կայացա՞ծ կինոփառատոն է:

- «Ոսկե ծիրանը» կարելի է գնահատել որպես ընդհանուր միջազգային կինոփառատոնների բաղկացուցիչ մաս: Այստեղ կցանկանայի մի կարեւոր փաստ նշել. փառատոնը պետք է ընտրի ոչ միայն գեղարվեստական ֆիլմեր, որոնք գրավում են մտավորականության ուշադրությունը, այլեւ այնպիսիք, որոնք ժողովրդականություն են վայելում, նկարահանված են ավելի լայն շրջանակների համար եւ գեղարվեստական բարձր արժեք են ներկայացնում: Իմ կարծիքով, այդ դեպքում «Ոսկե ծիրանը» կարող է ավելի մեծ հաջողություններ արձանագրել եւ դառնալ ավելի ժողովրդական:

- Ժամանակ ունեցա՞ք հայկական ֆիլմեր դիտելու:

- Այո՛, դիտեցի «Սիրով եւ երախտագիտությամբ» վավերագրական ֆիլմը, որն արժանացավ գլխավոր մրցանակի:

- Որպես կինոքննադատ ի՞նչ կարծիք ունեք հայկական ֆիլմերի մասին ընդհանրապես:

- Վերջին տարիներին նկարահանված լիամետրաժ ֆիլմերից մի քանիսին հիշ թե շատ ծանոթ եմ: Դիտել եմ «Մարիամը», «Ուրախ ավտոբուսը», ինչպես նաեւ մի շարք կարճամետրաժ ֆիլմեր: Կարծում եմ, լիամետրաժ ֆիլմերը հիմնականում նկարահանվում են կինոփառատոներում ցուցադրելու համար եւ ներքին խնդիրներ չունեն, իսկ կարճամետրաժ եւ վավերագրական ֆիլմերը Հայաստանում ավելի լայն հնարավորություններ ունեն, քանի որ դրանք կարելի է նկարահանել ավելի փոքր բյուջեով: Հիմա շատ քիչ ֆիլմեր են արտադրվում, ի տարբերություն խորհրդային տարիների, երբ կար «Հայֆիլմ», որտեղ տարեկան բազմաթիվ ֆիլմեր էին նկարահանվում: Համեմատելու եզրեր չկան, որովհետեւ հիմա ֆիլմարտադրություն գրեթե գոյություն չունի: Հայաստանը նախկինում էլ միջազգային մասշտաբով որակյալ ֆիլմեր չուներ, սակայն թե՛ այն ժամանակ, թե՛ հիմա ստեղծվում են բավականին լավ ֆիլմեր:

-«Ֆաջր» կինոփառատոնի ժամանակ լրագրողները շատ մեծ դերակատարում ունեն, իսկ Հայաստանում «Ոսկե ծիրանի» ավարտից հետո այլեւս ոչ մի խոսք չի ասվում ֆիլմերի մասին: Անցկացվում են մի քանի կինոռեժիսորների մամլո ասուլիսներ ու դրանով ամեն ինչ ավարտվում է: Ֆիլմերը երբեք խորապես չեն քննարկվում: Ի՞նչ կասեիք այդ կապակցությամբ:

-Գուցե պատճառն այն է, որ Հայաստանում չկա ներքին կինոտարածություն: Անդրադառնալով քիչ առաջ նշածս խնդիրներին, կցանկանայի ավելացնել եւս մեկը: Իմ կարծիքով, «Ոսկե ծիրանի» թերություններից մեկն այն է, որ հատկապես միջազգային եւ վավերագրական ֆիլմերի ցուցադրումից հետո քննարկումներ չեն լինում: Ֆիլմի մասին խոսվում է նախքան ցուցադրությունը, իսկ դա ճիշտ չէ: Մարդիկ նախ պետք է դիտեն ֆիլմը, հետո միայն կարծիք հայտնեն: Կարծում եմ, քննարկումների ու բանավեճերի զգալի պակաս կա:

- Շնորհակալ եմ զրույցի համար, հուսով եմ, մյուս տարի էլ կմասնակցեք «Ոսկե ծիրան» կինոփառատոնին:

- Եթե հրավիրեն եւ ֆիլմ ունենամ ցուցադրելու, ինչո՞ւ ոչ:

- Իսկ հույսեր կա՞ն:

-Անշուշտ, ունեմ վավերագրական ֆիլմեր, սակայն չգիտեմ, թե որքանով են դրանք հարմար կինոփառատոնում ներկայացնելու համար: Ֆիլմերից մեկը Թեհրանից Կասպից ծով անցնող ճանապարհների մասին է, մեկ ուրիշը՝ այդ ափերով թափառող աշխարհաշրջիկների մասին:

Կադր «Թեհրանը լուսանկարներում» ֆիլմից

կամ սցենարի հեղինակի ազգությամբ հայ լինելն է: Ֆիլմերը ներկայացվում են, սակայն ընդհանրապես չեն առնչվում հայկական թեմաներին: Այլ կերպ ասած, ֆիլմի ստեղծողը գուցե հայ է, սակայն ֆիլմը հայկական չէ: Այստեղ հարց է առաջանում, թե որքանո՞վ է անհրաժեշտ «Հայկական համայնապատկերի» առկայությունը:

Իմ եւ մի քանի ընկերներիս կարծիքով, կինոփառատոնը պետք է ունենա հայկական ֆիլմերի մրցութային բաժին: Հայկական ասելով, նկատի ունեմ Հայաստանում ստեղծված ֆիլմերը, իսկ սփյուռքահայ ռեժիսորների նկարահանած ֆիլմերը պետք է ընդգրկել արտամրցութային ծրագրում՝ զուտ հանդիսատեսին ներկայացնելու համար: Օրինակ, իրանական «Ֆաջր» կինոփառատոնն ունի 2 բաժին՝ արտասահմանյան եւ ներքին արտադրության ֆիլմերի: Մարդիկ իսկապես հետաքրքրված են Իրանում հասնել որպես ընդհանուր միջազգային կինոփառատոնների բաղկացուցիչ մաս: Այստեղ կցանկանայի մի կարեւոր փաստ նշել. փառատոնը պետք է ընտրի ոչ միայն գեղարվեստական ֆիլմեր, որոնք գրավում են մտավորականության ուշադրությունը, այլեւ այնպիսիք, որոնք ժողովրդականություն են վայելում, նկարահանված են ավելի լայն շրջանակների համար եւ գեղարվեստական բարձր արժեք են ներկայացնում: Իմ կարծիքով, այդ դեպքում «Ոսկե ծիրանը» կարող է ավելի մեծ հաջողություններ արձանագրել եւ դառնալ ավելի ժողովրդական:

ՀՈՒՐԵՐ

Էրիք Նազարյանի ֆիլմը ներկայացվել է «Voice Award» մրցանակի

«Կապույտ ժամը»

Ամերիկահայ կինոբեմադրիչ Էրիք Նազարյանի «Կապույտ ժամը» ֆիլմը, որն անցած տարի «Ոսկե ծիրան» կինոփառատոնում արժանացավ մի քանի մրցանակի, օգոստոսի 22-ին կցուցադրվի Գլենդելի կենտրոնական գրադարանի դահլիճում: Ֆիլմը վերջերս ընդգրկվել է «Voice Award» մրցանակին հավակնող ֆիլմերի շարքում: Այս մրցանակաբաշխությունն անցկացվում է Մ. Նահանգների առողջապահության եւ սպասարկման դեպարտամենտի, ինչպես նաեւ Արեւմտյան Ամերիկայի գրողների գիլդիայի հովանավորությամբ:

Էրիք Նազարյանի «Կապույտ ժամը» ֆիլմի մասին Ատոմ Էգոյանն ասել է, որ այն սքանչելի եւ նրբորեն կառուցված ֆիլմ է: Իսկ Թուրինի կինոփառատոնը Էրիքի մասին գրել է. «Նազարյանը ցուցադրում է կինոլեզվի խորհրդավոր հոգեհարազատություն: Նա հաստատապես մի ուրիշ կինոբեմադրիչ է, որին պետք է հետեւել առաջիկա տարիներին»:

Նատալյա Միրզոյանի ֆիլմը ճանաչվել է լավագույնը

Պետերբուրգում օրերս ավարտվել է կարճամետրաժ ֆիլմերի «Open Cinema» փառատոնը, որի փակման արարողությունը տեղի է ունեցել Պետրոգրադվոլվյան ամրոցի լողափում, ուր եւ ցուցադրվել են մրցանակակիր ֆիլմերն ու հանձնվել են մրցանակները: Չորս անվանակարգերի համար ընտրված 77 ֆիլմերից միայն երեքն են արժանացել գլխավոր մրցանակի: «Անիմացիա» անվանակարգում մրցել են 10 ֆիլմեր, ժյուրիի անդամների թունդ բանավեճերից հետո գլխավոր մրցանակը հանձնվել է «Մանկության ծառը» ֆիլմին՝ ռեժիսոր Նատալյա Միրզոյան (Ռուսաստան):

Մայքլ Դուգլասի որդին թեւաթափ է արել հորը

Ամերիկացի հանրաճանաչ դերասան Մայքլ Դուգլասի որդին՝ 30-ամյա Կամերոնը, ձերբակալվել է Մանհեթենում՝ թմրադեղեր վաճառելու մեղադրանքով: «Մեր ընտանիքը ցնցված է եւ խորապես հիասթափված Կամերոնի վարքագծից», ասել են Մայքլը եւ նրա օրինական կինը՝ Դայանդրա Լուկերը: «Ամեն մի ընտանիք, որ գործ է ունեցել թմրադեղերի չարաշահման հետ, լավ գիտի, թե որքան կործանարար է դա», հավելել են նրանք:

Օլիվեր Սթոունը նոր գաղտնիքներ է բացահայտում

Կինոբեմադրիչ Օլիվեր Սթոունը պատրաստվում է գաղտնիքներ բացահայտել իր նոր վավերագրական ֆիլմում, որը նկարահանում է ամերիկյան կաբելային հեռուստատեսության համար: Եթե նրա «Նիքսոն» ֆիլմը կենտրոնացած էր հակասական դեմքերի եւ իրադարձությունների վրա, ապա նոր ֆիլմում երեւան կգան բոլորովին գաղտնի պահված դեպքեր: Ֆիլմը հենց այդպես էլ կոչվում է «Օլիվեր Սթոունի գաղտնի պատմությունը Ամերիկայի մասին»:

Թեման առնչվում է ԽՍՀՄ-ի հետ Սառը պատերազմին, երկրի նախագահ Հարի Թրումանի՝ Ճապոնիայի վրա ատոմային ռումբ նետելու որոշմանը եւ կոմունիզմի անկումից հետո Մ.Նահանգների գլոբալ դերակատարման մեջ տեղի ունեցած փոփոխություններին:

Սթոունը հավատում է, որ իր նոր ֆիլմը կլինի այն հսկայական ավանդը, որ ինքը երբեւէ կարող էր թողնել իր զավակներին եւ հետագա սերունդներին: «Ես միայն կարող եմ հուսալ, որ մեր մտածողության մեջ տեղի կունենա փոփոխություն, եւ արդյունքը կլինի հենց դա»:

62-ամյա բեմադրիչի վերջին աշխատանքը «W» ֆիլմն էր՝ Ջորջ Բուշի մասին՝ թողարկված 2008 թվականի նախագահական ընտրություններից մի քանի շաբաթ առաջ:

Էջը պատրաստեց
ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆԸ

AZG NEW 7.QXD 8/21/2009 10:03 PM Page 1

Ասպարեզում մնացել է միայն Կարեն Ալյազյանը

Լեհաստանի Շեցին քաղաքում ընթացող բռնցքամարտի Եվրոպայի երիտասարդական առաջնությունում ռինգ դուրս եկած հայաստանցի 8 բռնցքամարտիկներից մեդալների համար պայքարն է շարունակում միայն Կարեն Ալյազյանը: Մինչեւ 51 կգ քաշային կարգում հանդես եկող Կարենն իր համար առնվազն աղահովել էր բրոնզե մեդալը: Սակայն նա դրանով չբավարարվեց: Կարենը վերելքով անցկացրեց նաեւ կիսաեզրափակիչ մենամարտը բուլղարացի Ստեֆան Իվանովի հետ եւ հաղթելով 7-0 հաշվով՝ մտավ եզրափակիչ: Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը նա կվիճարկի ռուսաստանցի Գրիգորի Նիկոլայչուկի հետ: Վերջինս դժվարին մենամարտում առավելության հասավ ադրբեջանցի Էլնուր Զեյնալովի նկատմամբ (7-5):

Մրցանակակիր դառնալու լավ հնարավորություն էր ընձեռվել մինչեւ 91 կգ քաշային Ազատ Դավթյանին: Քաշային այս կարգում մասնակիցները փոքրաթիվ են եւ վիճակահանությամբ հայ բռնցքամարտիկը պայքարը պետք է սկսեր քառորդ եզրափակիչից: Այսինքն՝ առաջին մենամարտը շահելու դեպքում նա նվազագույնն իր համար կաղահովեր բրոնզե մեդալը: Սակայն Դավթյանը չկարողացավ օգտվել ընձեռված հիանալի հնարավորությունից: Նրա առաջին ելույթը լեհական ռինգում դարձավ վերջինը: Դավթյանը 0-2 հաշվով զիջեց բելառուսցի Վլադիսլավ Կուրցովին: Վերջինս կիսաեզրափակիչում կմրցի ռուսաստանցի Ալեքսեյ Եգորովի հետ:

Մեդալ նվաճել չհաջողվեց նաեւ գերծանրքաշային Հովհաննես Օհանյանին, որը պարտվեց խորվաթ Դինո Մանսուրին (0-2): Վերջինս եզրափակիչի ուղեգիրը կվիճարկի լիտվացի Մանթաս Վալավիչյուսի հետ մրցավեճում:

Անհաջողության մատնվեց նաեւ Գերմանիայի դրոշի ներքո հանդես եկող Արայիկ Մարությանը (64 կգ), ով քառորդ եզրափակիչում պարտության էր մատնել մեր հավաքականի անդամ Վլադիմիր Մարգարյանին: Կիսաեզրափակիչում Մարությանը 3-7 հաշվով պարտվեց ռուսաստանցի Ալեքսանդր Բեսպուտինին ու բավարարվեց բրոնզե մեդալով: Իսկ քաշային այդ կարգում չեմպիոնի տիտղոսը կվիճարկեն Բեսպուտինն ու անգլիացի Մարկ Հեֆրոնը, որը պարտության էր մատնել լեհ Քամիլ Գարձելիկին (6-3):

Մխիթարյանի ձեռնարկած գրոհը թիմին փրկեց պարտությունից

Կայացան ֆուտբոլի Եվրոպայի լիգայի որակավորման 4-րդ փուլի առաջին հանդիպումները: Պատասխան խաղերից հետո հայտնի կդառնան այն երջանիկ թիմերը, որոնց բախտ կվիճակվի հանդես գալու խմբային մրցաշարում:

Հայ ֆուտբոլասերների ուշադրության կենտրոնում առաջին հերթին Դոնեցկի «Մետալուրգի» ելույթն էր, որի կազմում հաջող է խաղում Հենրիխ Մխիթարյանը: Նա Եվրոպայի լիգայի նախորդ 4 հանդիպումներում «Մետալուրգի» կազմում արդեն 3 գոլ է խփել: 4-րդ փուլում «Մետալուրգը» սեփական հարկի տակ հյուրընկալել էր ավստրիական «Աուստրիային»: Այս անգամ Մխիթարյանին չհաջողվեց գոլի հեղինակ դառնալ, իսկ հանդիպումն ավարտվեց ոչ-ոքի (2-2):

Առաջին խաղակեսում մրցակիցները մեկական գնդակ փոխանակեցին: Ընդմիջումից հետո ավստրիացիները 2-րդ գոլը խփեցին եւ շաս մոտ էին հաղթանակին: Սակայն դաշտի տերերին հաջողվեց ավելացված ժամանակի 2-րդ րոպեին փրկել խաղը: Մխիթարյանը սկսեց թիմի այն գրոհը, որը դիպուկ հարվածով եզրափակեց Վելիզար Դիմիտրովը: Հաջորդ փուլ մտնելու համար այժմ «Մետալուրգին» հարկ կլինի պատասխան խաղում հաղթել մրցակցին, ինչն այնքան էլ հեշտ խնդիր չէ, մանավանդ, որ ծանր վնասվածք է ստացել ուկրաինական ակումբի առաջատար խաղացողներից մեկը՝ Մգունին: Այժմ «Մետալուրգը» շտաբ կերպով նոր հարձակվող է փնտրում: Նշենք, որ Մխիթարյանը մասնակցեց ողջ հանդիպմանը, իսկ Արարատ Առաֆելյանը թեեւ հայտավորված էր, սակայն այդպես էլ խաղադաշտ դուրս չեկավ:

Դոնեցկի «Շախտյորը» հյուրընկալվելիս ջախջախեց թուրքական «Սիվասպորին» եւ գործնականում աղահովեց խմբային մրցաշարի ուղեգիրը: Ուկրաինական մյուս ակումբը՝ Խարկովի «Մետալիստը» մրցակցի դաշտում ոչ-ոքի (1-1) խաղաց ավստրիական «Շտուրմի» հետ: Իսկ Հաղթություն կնվիրեցին նաեւ Գելֆանդն ու Կամսկին, Կարյակինն ու Ալեքսեեւը: 2-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց Էռնեստ Ինարկիեւը՝ պարտության մատնելով Դմիտրի Յակովենկոյին: Էլյանովը հաղթեց Ջեպարիձեին: 11-րդ տուրից հետո աղյուսակը 7-ական միավորով գլխավորում են Կասիմջանովը, Լեկոն ու Իվանչուկը: Արոնյանն ու Ալեքսեեւն ունեն 6,5-ական միավոր: Հակոբյանի օգտին գրանցված է 4,5 միավոր:

Մրցաշարի ավարտին մնաց 2 տուր: 12-րդ տուրում վճռորոշ կլինի Լեկո-Արոնյան պարտիան, որում հայ գրոսմայստերը խաղալու է սեւերով: Հակոբյանի մրցակիցը կլինի Ինարկիեւը: Կասիմջանովը կխաղա Գելֆանդի հետ:

Մեծ ելույթներ Աբու Դաբիում

Աբու Դաբիում վերջնագիծը հասավ շախմատի միջազգային մրցաշարը, որի 141 մասնակիցների թվում էին Հայաստանի 5 ներկայացուցիչներ: Նրանք բավական հաջող հանդես եկան: Աշոտ Անասասյանը, Զավեն Անդրեասյանն ու Հրանտ Մելֆումյանը 9 հնարավորից վաստակեցին 7-ական միավոր: Ավարտական տուրից առաջ մրցաշարի հաղթող դառնալու լավ հնարավորություններ էր պահպանում Աշոտ Անասասյանը, սակայն 9-րդ տուրում նա ոչ-ոքի խաղաց ուկրաինացի Յուրի Դրոգդովսկու հետ: Իսկ մրցաշարի հաղթող ճանաչվեց բելառուսցի Ալեքսեյ Ալեքսանդրովը, որը, պարտության մատնելով մրցաշարի միանձնյա առաջատար Ալեքսանդր Ռահմանովին, բրոնզանցեց նրան՝ վաստակելով 7,5 միավոր:

Վերջին տուրերում վստահ խաղով աչքի ընկավ Հրանտ Մելֆումյանը: Նա Դմիտրի Բոչարովի նկատմամբ տոնած հաղթանակով ավարտեց մրցաշարը: Զավեն Անդրեասյանը եւս հաղթեց՝ պարտության մատնելով Հրայր Սիմոնյանին: Վերջինս 6 միավորով զբաղեցրեց 18-րդ տեղը: Լաստուցիչ գործակիցները հաշվի առնելով՝ Աշոտ Անասասյանը գրավեց 3-րդ տեղը, որին հաջորդեց Զավեն Անդրեասյանը, իսկ Հրանտ Մելֆումյանը հանգրվանեց 6-րդ հորիզոնականում: Լիլիթ Գալոյանը, ոչ-ոքի ավարտելով հանդիպումը Զուրաբ Ստուրուայի հետ, 6 միավորով զբաղեցրեց 23-րդ տեղը:

Աշխարհի ամենաարագավազ մարդը հիացնում է

Բեռլինում ընթացող թեթեւ atլետիկայի աշխարհի առաջնության հերթական օրվա գլխավոր իրադարձությունը ճամայկացի արագավազորդ Ուսեյն Բոլտի համաշխարհային ռեկորդն էր 200 մ վազքում: Մի քանի օր առաջ նա բարելավել էր իրեն պատկանող բարձրագույն ցուցանիշը 100 մ վազքում: Եվ ահա Բոլտը կրկին զարմացրեց մարզաձեւի սիրահարներին: Նա մրցաստարծությունը հաղթահարեց 19,19 վրկում: Ի տարբերություն 100 մ վազքի, այս մրցաձեւում Բոլտն արժանի հակառակորդներ չուներ, ինչպիսին ամերիկացի Թայսոն Գեյն էր: Վերջինս հրաժարվել էր 200 մ վազքին մասնակցելուց՝ ուժերը կենտրոնացնելով 4x400 մ փոխանցումավազքի վրա: Իսկ Բոլտը խոստացել է 200 մ-ի համաշխարհային ռեկորդը հասցնել 18,18-ի: Նա նաեւ հայտնել է, որ մտադիր չէ հանդես գալ 400 մ վազքի մրցումներում:

Տղամարդկանց 110 մ արգելավազքում 13,14 վրկ արդյունքով հաղթող ճանաչվեց Բարբադոսի ներկայացուցիչ Ռայան Բրեսուեյտը: Բավական համառ մրցակցություն ծավալվեց կանանց բարձրացատկի մրցումներում: Աթենքի օլիմպիական խաղերի չեմպիոնուհի Ելենա Սլեսարենկոն հեռու էր իր օպտիմալ մարզավիճակից, ուստի 1,92 մ արդյունքով գրավեց միայն 10-րդ տեղը: Ոսկե մեդալի համար պայքարը ծավալվեց խորվաթ Բլանկա Վլասիչի, ռուսաստանցի Աննա Չիչերովայի եւ գերմանացի Արիանա Ֆրիդրիխի միջեւ:

Հիմնական պայքարը սկսվեց 2,02 մ-ից: Առաջինն այդ բարձրությունը հաղթահարեց Աննա Չիչերովան: Իսկ ահա Ֆրիդրիխը միայն վերջին փորձի ժամանակ կարողացավ պայքարը շարունակելու իրավունք սանակ: Դրանից հետո Վլասիչը հաջող ցատկ կատարեց (2,04 մ): Ֆրիդրիխը փորձեց հաղթահարել 2,06 բարձրությունը, սակայն անհաջողության մատնվեց: Աշխարհի չեմպիոնուհու տիտղոսը նվաճելուց հետո Բլանկա Վլասիչը փորձեց գրոհել համաշխարհային ռեկորդը (2,10 մ), սակայն՝ ապարդյուն:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Անհրաժեշտ է հաղթանակ խոշոր հաշվով

Ֆուտզալի Եվրոպայի լիգայի որակավորման փուլի 2-րդ խաղում ՀՀ չեմպիոն «Էրեբունին» ոչ-ոքի (3-3) ավարտեց հանդիպումը իսրայելական ԱՍԱ թիմի հետ: Խաղը շաս անհաջող սկսվեց մեր թիմի համար: Արդեն 4-րդ րոպեին իսրայելցիները խաղը շահում էին 2-0 հաշվով Գոլդբերգի խփած երկու գոլերի շնորհիվ: Բայց մինչեւ ընդմիջում Արամ Քոսայանը եւ Հակոբ Ուզունյանը վերականգնեցին հավասարակշռությունը: Ընդմիջումից հետո Զիսմանը կրկին առաջ մղեց իսրայելցիներին, սակայն պատասխան գրոհի ժամանակ Արմեն Գյուլամբարյանը հավասարեցրեց հաշիվը:

Խմբի մյուս խաղում ավստրիական «Օլ Սթարզը» 5-4 հաշվով պարտության մատնեց իսլանդական «Հվյոտին»: Ավարտական տուրից առաջ «Էրեբունին» եւ ԱՍԱ-ն վաստակել են 4-ական միավոր, 3 միավոր ունի «Օլ Սթարզը»: Վերջին խաղում «Էրեբունին» մրցելու է հետնապահ «Հվյոտի» հետ: Հաջորդ փուլի ուղեգիր նվաճելու համար հարկավոր է խմբում զբաղեցնել 1-ին տեղը: Առայժմ աղյուսակը գլխավորում է ԱՍԱ-ն, որի խփած եւ բաց թողած գնդակների տարբերությունը 2-ով գերազանցում է «Էրեբունուն»: Այնպես որ ուղեգրի նվաճման համար հարկ կլինի «Հվյոտին» հաղթել հնարավորինս խոշոր հաշվով, եթե իհարկե ԱՍԱ-ն պարտության մատնի «Օլ Սթարզին»:

AZG NEW 8.QXD 8/21/2009 10:55 PM Page 1

«Ազատ, արդար եւ թափանցիկ» ընտրություններ Աֆղանստանում

Բիարկե, հաղթող կճանաչվի ԱՄՆ-ի դրածո Կարզայը

Օգոստոսի 20-ին, ինչպես նախօրոք տեղեկացրել էինք, Աֆղանստանում անցկացվեցին նախագահական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները: Թալիբները, նախապես բոյկոտելով դրանք, բնակչությանը նախազգուշացրել էին, որ ահաբեկչական գործողությունների են դիմելու ընտրողների նկատմամբ: Նրանց սպառնալիքը ենթադրում էր ընտրությունների ձախողում, այդ իսկ պատճառով էլ լուրջ մտահոգություններ էր առաջացրել ինչպես նախագահ Համիդ Կարզայի իշխանությունների, այնպես էլ ԱՄՆ-ի գլխավորությամբ հակաթալիբյան միջազգային ուժերի, ՆԱՏՕ-ն՝ ներառյալ, հրամանատարության շրջանում:

Ընտրություններն, այնուամենայնիվ, կայացան, որքան էլ դրանց մասնակցեր 15 մլն աֆղան ընտրողների ընդամենը 40-50 տոկոսը: Ընտրության օրը Աֆղանստանի 34 նահանգներից 15-ում ընտրատեղամասերի վրա կատարվեցին 73 հարձակումներ, որոնց հետեւանքով սպանվեց 26 մարդ՝ 8 աֆղան զինվոր, 9 ոստիկան, 9 խաղաղ բնակիչ: Այսինքն՝ հարձակումների արդյունքներն այնքան սարսափելի չեն եղել, որքան ենթադրվում էր ընտրությունների նախօրյակին, եւ այդ փաստն անձամբ գոհունակությամբ արձանագրել է Քաբուլում ՄԱԿ-ի ներկայացուցիչը, համարելով դա ընտրություններում ձեռք բերված ամենադրական նվաճումը: Այդ ընթացքում Աֆղանստանի եւ Պակիստանի գծով ԱՄՆ նախագահի հատուկ ներկայացուցիչ Ռիչարդ Հոլբրուքը, որը եղել էր տարբեր ընտրատեղամասերում, հայտարարել է, որ ընտրություններն անցան ազատ, արդար եւ թափանցիկ:

Թե ինչպե՞ս կարելի է ընտրություններն ազատ, արդար եւ թափանցիկ անցկացնել մի երկրում, որը դեռեւս 2001-ից օկուպացված է, որտեղ օտարերկրյա ուժերը իշխող վարչակարգին տապալում, ապա նախագահ են նշանակում ամերիկաբնակ գործչին եւ այս ամենով հանդերձ չեն կարողանում ոչ մի կերպ վերահսկել երկիրը՝ մայրաքաղաքով հանդերձ, դժվար է պատկերացնելը:

Ըստ երեւույթին, ընտրություններն ազատ, արդար եւ թափանցիկ են դառնում, երբ տվյալ երկրում օկուպացման առաջին իսկ օրից նախագահի պաշտոնում է նշանակվում ԱՄՆ-ի դրածոն, եւ Արեւմուտքն ամեն կերպ փորձում է իշխանության ղեկին պահել այս դրածոյին: Ենթադրվում է, որ Աֆղանստանում ընտրությունների նախնական արդյունքները հայտնի կդառնան երկու շաբաթ հետո, իհարկե, հաղթող կճանաչվի գործող նախագահ Կարզայը: Ի դեպ, 2001-ին Աֆղանստանի օկուպացումից հետո նախագահական առաջին ընտրություններն անցկացվել էին 2004-ին, եւ ընտրողների ձայների 54 տոկոսով նախագահ էր ընտրվել հենց Կարզայը:

Հարցը սակայն նախագահի անձը չէ, այլ ընտրությունների պաշտոնական արդյունքների հետ համակերպվելու աֆղան ժողովրդի պատրաստակամությունը: Կհամաձայնվի՞ ժողովուրդը, թե՞ ոչ, ցույց կտա ժամանակը: Բայց որ եվրոպական լրատվամիջոցները, ի տարբերություն ամերիկյանների, Աֆղանստանում քաղաքացիական պատերազմի վերսկսման կանխագուշակում են անում կազմված ընտրությունների հետ, եւ երկրում առկա են այդ կանխագուշակումների իրականացման անհրաժեշտ բոլոր նախապայմանները, կասկած չի հարուցում:

Հ. ՉԱՔԲՅԱՆ

Ազատ, արդար եւ թափանցիկ» ընտրություններ Աֆղանստանում

Բիարկե, հաղթող կճանաչվի ԱՄՆ-ի դրածո Կարզայը

Օգոստոսի 20-ին, ինչպես նախօրոք տեղեկացրել էինք, Աֆղանստանում անցկացվեցին նախագահական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները: Թալիբները, նախապես բոյկոտելով դրանք, բնակչությանը նախազգուշացրել էին, որ ահաբեկչական գործողությունների են դիմելու ընտրողների նկատմամբ: Նրանց սպառնալիքը ենթադրում էր ընտրությունների ձախողում, այդ իսկ պատճառով էլ լուրջ մտահոգություններ էր առաջացրել ինչպես նախագահ Համիդ Կարզայի իշխանությունների, այնպես էլ ԱՄՆ-ի գլխավորությամբ հակաթալիբյան միջազգային ուժերի, ՆԱՏՕ-ն՝ ներառյալ, հրամանատարության շրջանում:

Ընտրություններն, այնուամենայնիվ, կայացան, որքան էլ դրանց մասնակցեր 15 մլն աֆղան ընտրողների ընդամենը 40-50 տոկոսը: Ընտրության օրը Աֆղանստանի 34 նահանգներից 15-ում ընտրատեղամասերի վրա կատարվեցին 73 հարձակումներ, որոնց հետեւանքով սպանվեց 26 մարդ՝ 8 աֆղան զինվոր, 9 ոստիկան, 9 խաղաղ բնակիչ: Այսինքն՝ հարձակումների արդյունքներն այնքան սարսափելի չեն եղել, որքան ենթադրվում էր ընտրությունների նախօրյակին, եւ այդ փաստն անձամբ գոհունակությամբ արձանագրել է Քաբուլում ՄԱԿ-ի ներկայացուցիչը, համարելով դա ընտրություններում ձեռք բերված ամենադրական նվաճումը: Այդ ընթացքում Աֆղանստանի եւ Պակիստանի գծով ԱՄՆ նախագահի հատուկ ներկայացուցիչ Ռիչարդ Հոլբրուքը, որը եղել էր տարբեր ընտրատեղամասերում, հայտարարել է, որ ընտրություններն անցան ազատ, արդար եւ թափանցիկ:

Թե ինչպե՞ս կարելի է ընտրություններն ազատ, արդար եւ թափանցիկ անցկացնել մի երկրում, որը դեռեւս 2001-ից օկուպացված է, որտեղ օտարերկրյա ուժերը իշխող վարչակարգին տապալում, ապա նախագահ են նշանակում ամերիկաբնակ գործչին եւ այս ամենով հանդերձ չեն կարողանում ոչ մի կերպ վերահսկել երկիրը՝ մայրաքաղաքով հանդերձ, դժվար է պատկերացնելը:

Ըստ երեւույթին, ընտրություններն ազատ, արդար եւ թափանցիկ են դառնում, երբ տվյալ երկրում օկուպացման առաջին իսկ օրից նախագահի պաշտոնում է նշանակվում ԱՄՆ-ի դրածոն, եւ Արեւմուտքն ամեն կերպ փորձում է իշխանության ղեկին պահել այս դրածոյին: Ենթադրվում է, որ Աֆղանստանում ընտրությունների նախնական արդյունքները հայտնի կդառնան երկու շաբաթ հետո, իհարկե, հաղթող կճանաչվի գործող նախագահ Կարզայը: Ի դեպ, 2001-ին Աֆղանստանի օկուպացումից հետո նախագահական առաջին ընտրություններն անցկացվել էին 2004-ին, եւ ընտրողների ձայների 54 տոկոսով նախագահ էր ընտրվել հենց Կարզայը:

Հարցը սակայն նախագահի անձը չէ, այլ ընտրությունների պաշտոնական արդյունքների հետ համակերպվելու աֆղան ժողովրդի պատրաստակամությունը: Կհամաձայնվի՞ ժողովուրդը, թե՞ ոչ, ցույց կտա ժամանակը: Բայց որ եվրոպական լրատվամիջոցները, ի տարբերություն ամերիկյանների, Աֆղանստանում քաղաքացիական պատերազմի վերսկսման կանխագուշակում են անում կազմված ընտրությունների հետ, եւ երկրում առկա են այդ կանխագուշակումների իրականացման անհրաժեշտ բոլոր նախապայմանները, կասկած չի հարուցում:

Հ. ՉԱՔԲՅԱՆ

Ազատ եւ Հայաստանում նախագահ Սարգսյանին հասցեագրված մեղադրանքների թուրքական արձագանքները

1-ին էջից

Նախագահ Սերժ Սարգսյանի հայտարարության հայաստանյան արձագանքներին թուրքական մամուլի անդրադարձը կատարվել է առանց մեկնաբանության եւ անախորժ աղմուկի առիթ չտալու այդ նույն մղումով: Քանի որ Հ�հ նախագահի հայտարարության հայաստանյան շահարկումներն արտահայտվեցին Սերժ Սարգսյանին հասցեագրված մեղադրանքներով, ուստի անդրադառնալով դրանց «Հայաստանի ընդդիմությունը մեղադրում է» եւ «Թուրքիայի առնչությամբ խստագույն քննադատություն Սարգսյանին», վերնագրերով թուրքական լրատվամիջոցները փորձել են ապահովել անդրադարձի հավասարակշռությունը:

Մեղադրանքի հասցեագրման պարագայում խնդրո առարկա Տեր-Պետրոսյանն է, որի հայտարարությունն օգոստոսի 19-ին կայքէջում հետեւյալ տողերով էր ներկայացրել Թուրքական հանրային հեռուստատեսությունը. «Հայաստանի նախկին նախագահ եւ Ընդդիմության առաջնորդ Լեւոն Տեր-Պետրոսյանը Հայաստանի ազգային շահերին հակադիր գործելու մեջ մեղադրեց նախագահ Սարգսյանին: Ըստ Arm-Today գործակալության՝ Հայ ազգային կոնգրեսի առաջնորդը միաժամանակ ասաց, որ նախագահ Սարգսյանն ու կառավարությունը ծախել են Ղարաբաղը: Տեր-Պետրոսյանի հավաստմամբ, Ղարաբաղը ձեռքից բաց չթողնելու միակ ճանապարհը Հայաստանի ներկա վարչակարգի հեռացումն է իշխանությունից»:

Անդրադարձի առումով թուրքական հանրային հեռուստատեսությանը հաջորդ օրը՝ օգոստոսի 20-ին, լրացրել է ընդդիմադիր Ժողովրդահանրապետական կուսակցության խոսափող «Ջումհուրիեթ» թերթը, հիմք ընդունելով Լեւոն Ջուրաբյանի հայտարարությունն «Ազատություն» ռադիոկայանին: Ահա թե ինչ է գրել թուրքական այս թերթը. «Արմատական ընդդիմության՝ Հայ ազգային կոնգրեսի համակարգող Լեւոն Ջուրաբյանն «Ազատություն» ռադիոկայանին տված հարցազրույցում կարծիք հայտնեց, որ «ֆուտբոլային» դիվանագիտությունը շարունակելու նպատակով Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի հոկտեմբերին երկու երկրների ազգային հավաքականների՝ Բուրսայում նշանակված խաղը դիտելու համար Թուրքիա մեկնելը հազիվ թե հարաբերությունների նորմալացման առումով փոխի իրերի դրությունը: Ջուրաբյանը նշելով, որ Սերժ Սարգսյանն «անուղղելի» սխալներ է գործել Թուրքիայի հետ մերձեցման քաղաքականության մեջ, ասաց. «Թուրքիա գնալ կամ չգնալը չեն ուղղի այս սխալները»: Ի դեպ, «Ազատությունը» նշեց, որ Թուրքիայի նկատմամբ Սարգսյանի որդեգրած քաղաքականությունը «ձախողված» որակելու Տեր-Պետրոսյանի եւ ընդդիմության այլ ներկայացուցիչների դրսեւորումներին հակառակ, Արեւմուտքում շատերը դա դրական են գնահատում»:

Խոզի գրիպի նոր ձեւափոխություն

Չիլիում խոզի գրիպ անվամբ հայտնի վիրուսը հայտնաբերվել է երկու ֆերմաներում բսվող եւ այնուհետեւ վաճառքի հանվող հնդկահավերի մեջ: Սա հայտնի է դարձել Չիլիի առողջապահության նախարարության հաղորդագրությունից, որտեղ հայտնվում է նաեւ, թե գործընթացը նախարարության վերահսկողության տակ է, եւ ոչինչ չի սպառնում հնդկահավի միսը եւ նրանից պատրաստած արտադրատեսակները սպառողներին: Այնուամենայնիվ՝ այս լուրը մեկ անգամ եւս վերահաստատում է այն փաստը, որ խոզի գրիպը կամ A/H1N1 վիրուսը բավական արագ մուտացիայի է ենթարկվում, եւ չի կարելի վստահաբար կանխատեսել, թե էլ ինչպիսի՞ փոփոխություններ կկրի:

Սակայն կա նաեւ մխիթարական լուր՝ Չինաստանում ստեղծվել է խոզի գրիպի դեմ արդյունավետ պայքարող առաջին պատվաստանյութը, որը դրական արդյունքով արդեն փորձարկվել է մարդկանց վրա:

ՕԱՆՈՒՅՈՒՄ

Շաբաթական ամփոփ տվյալներ

Կենտրոնական բանկի հասարակայնության հետ կապերի ծառայությունը տեղեկացնում է, որ օգոստոսի 17-21-ն ընկած ժամանակահատվածում արտարժույթի ներբանկային շուկայում բանկերի կողմից գնվել է 43,114,083 ԱՄՆ դոլար՝ 373.06 դրամ ԱՄՆ մեկ դոլարի դիմաց միջին փոխարժեքով, եւ վաճառվել 48,507,548 ԱՄՆ դոլար՝ 375.47 դրամ ԱՄՆ մեկ դոլարի դիմաց միջին փոխարժեքով:

Նույն ժամանակահատվածում միջբանկային շուկայում իրականացվել է 3,650,000 ԱՄՆ դոլարի առք եւ վաճառք՝ 373.66 դրամ մեկ ԱՄՆ դոլարի դիմաց միջին փոխարժեքով:

«ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ում նշված ժամանակահատվածում իրականացվել է 3,600,000 ԱՄՆ դոլարի առք եւ վաճառք՝ 375.79 դրամ մեկ ԱՄՆ դոլարի դիմաց միջին փոխարժեքով:

Օգոստոսի 10-16-ն ընկած ժամանակահատվածում բանկերի կողմից դրամով տրամադրված վարկերի ծավալը կազմել է 12.3 մլրդ դրամ, իսկ ԱՄՆ դոլարով տրամադրված վարկերի ծավալը՝ 18.6 մլն ԱՄՆ դոլար:

ՃԱՄՓՈՐԴԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատունն ընդունում է առաջարկներ պաշտոնական գործուղումների հետ կապված ճամփորդական ծառայությունների մատուցման վերաբերյալ: Առաջարկ ներկայացնողները պետք է լինեն Հայաստանում ճամփորդական ծառայությունների ոլորտի գործող ընկերություններ եւ հնարավորություն ունենան մատուցել մեծ ծավալների հասնող ծառայություններ: Հետաքրքրված կազմակերպությունները, սկսած ս.թ. օգոստոսի 17-ից, կարող են առաջարկների ներկայացման համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը ձեռք բերել ԱՄՆ դեսպանատնից, հասցեն՝ ք. Երեւան, Ամերիկյան փողոց 1:

ՀՀ կենտրոնական բանկը տեղեկացնում է, որ արժութային շուկայում ձեւավորվել են հետեւյալ արտարժույթների միջին փոխարժեքները. 21.08.2009 թ.

ISO-ի կոդը	Միավոր	Արտարժույթ	Միջին փոխարժեք
USD	1	ԱՄՆ դոլար	375.80
EUR	1	ԵՎՐՈ	537.28
RUR	1	Ռուս. ռուբլի	11.82
GEL	1	Վրաց. լարի	223.40

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունեությունն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրված է տպագրության՝ 21.08.2009, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Նոյյան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: